# Azg
Azg
armenian daily

Մայիս 5
Չորեքշաբթի
1993

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐ ԱՅՍՏՍՎՈՒՆ ՕՐԱՑԵՐԻ
Գ տարի, թիվ 83 (334)
գինը 10 ռ.
դասիչ 69149

Երևան 375010
Հանրապետության 47

հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU


Աշխարհ

## Մոսկվայում դարձյալ ցույց կիրակի օրը

Մոսկվայում կոմունիստական շրջանակներից հայտարարվեց, թե առաջիկա կիրակի օրը դարձյալ ցույց է տեղի ունենալու, այս անգամ բողոքելու անցյալ շաբաթ օրվա ընթացքում պատահած վայրագությունների կապակցությամբ, որի համար կոմունիստները մեղադրում են կառավարությանը: Ոստիկաններից 251 եւ ցուցարարներից 70 վիրավոր խլած մայիսմեկյան այդ ցույցերի ընթացքում փաստորեն պաշտպանական կեցվածքով հանդես եկած ոստիկանության գործունեությունը պաշտպանվեց նախագահ Ելցինի կողմից:

## Սերբերը շարունակում են հարձակվել

Հակառակ ՄԱԿի եւ ՆԱՏՕ-ի շրջանակներում կայացվող նախապատրաստական աշխատանքներին, որոնք ձգտում են Աթենքում կայացած համաձայնությունը կիրառության մեջ դնել, Բոսնիա ուղարկելով շուրջ 70 հազար բազմազգ ուժեր, սերբերը շարունակում են հարձակվել հյուսիսարեւմտյան մահմեդական բնակավայրերի վրա: Երեկ նրանք հրասայլերով ու թնդանոթային կրակով գրոհեցին 40 հազար բնակիչ ունեցող Ժեպա բնակավայրի եւ հարակից գյուղերի վրա: Գուրժդեից ՄԱԿի խաղաղապահ ուժերը հաղորդեցին, թե իրենց ժամանելուց առաջ գրանցվել են սովահարությունից ինքնասպանության դեպքեր:

## Պերես. «Իսրայելը պատրաստ է Գազան վերադարձնել»

Իսրայելի արտգործնախարար Շիմոն Պերեսը հայտարարեց, թե իր երկիրը ցանկանում է Գազայի շրջանից հրաժարվել, որպեսզի Իսրայելում ապրող արաբներն ու Հորդանանն այնտեղ ստեղծեն միացյալ մի համադաշնություն: Իսրայելական հառուստատեսությամբ կատարված այս հայտարարությունն առաջինն է հրեա որեւէ նախարարի կողմից, երբ պաղեստինյան հորդանանյան համադաշնության ստեղծումը դիտվում է որպես նոր մի ինքնարեւելյան խաղաղության խոսակցություններում:

## Ֆրանսիան հրաժեշտ տվեց Բերեգովույին

Երեկ տեղի ունեցավ շաբաթ օրն ինքնասպան եղած նախկին վարչապետ Պիեր Բերեգովույի հուղարկավորությունն ու թաղումը: 20 հազարից ավել հուղարկավորներ մինչեւ Նավար գյուղաքաղաքի եկեղեցի հետեւեցին նրա դագաղին, իսկ եկեղեցում նախագահ Ֆրանսուա Միտերանի գլխավորությամբ 2000 պաշտոնատարներ, դիվանագետներ, հարազատներ ու բարեկամներ վերջին հրաժեշտը տվեցին նրան: Հուղարկավորների շարքում բազմաթիվ երկրների դիվանագետների մեջ բացակայում էր Հայաստանի ներկայացուցիչը:

## Հինդուս-իսլամ բախումներ

110 հոգի զոհվել եւ 300-ից ավել վիրավորվել են Հնդկաստանի հյուսիսարեւելյան Մանիպուր նահանգում տեղի հինդուսների եւ իսլամների միջեւ տեղի ունեցած երկօրյա բախումների հետեւանքով: Ոստիկանության տվյալների համաձայն, զոհերի մեծ մասը մահմեդականներ են: Հնդկական կառավարությունը երեկ 12 հազար զինվոր ուղարկեց բախումների վայր, կարգուկանոն հաստատելու:

## Անդրեոտին պահանջում է իրեն զրկել անձեռնմխելիությունից

Իտալիայի նախկին վարչապետ Ջուլիո Անդրեոտին երկրի սենատից պահանջեց իրեն զրկել պատգամավորական անձեռնմխելիությունից եւ թույլ տալ դատախազությանը սուրգելու մաֆիայի հետ գործակցած լինելու ենթադրյալ գործարքը: Նա վստահություն հայտնեց, թե այդպիսով իր արատավորված անունն իսկույն պիտի արվի: Մինչ այդ, երեկ Իտալիայում սկսվեց ավելի քան 30 հայտնի բիզնեսմենների ու քաղաքական գործիչների դատը, բոլորն էլ կաշառակերության հետ կապված գայթակղություններով:

## Քմերների նոր առաջխաղացումը

Կամբոջայում կարմիր քմերները նոր հարձակման են անցել կառավարական ուժերի դեմ: Երեկ նրանք գրոհեցին զբոսաշրջիկային կենտրոն Անգկոր Ուաթ տաճարների շրջանը, գրավեցին Սիեմ Ռիպի օդանավակայանը, ՄԱԿի խաղաղապահ ուժերին մղելով դեպի արվարձաններ:

Պարտքի Հարց

## Վաշինգտոն-Մոսկվա-Անկարա նոր ծրագիր

Մ. Նախանգների պետքարտուղարության մամուլի կցող Ժոզեֆ Սնայդերը մայիսի 4-ին հայտարարեց, թե Վաշինգտոնը հույս ունի, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության մեջ ներգրավված բոլոր կողմերը «դրականորեն կարձագանքեն» այն նոր ծրագրին, որ նախատեսում է վերսկսել բանակցությունները «Ադրբեջանի այդ վիճելի տարածքի» վերաբերյալ: Նա հայտարարեց, թե Մ. Նահանգները «ծանր աշխատանք» են տարել ԵԱՀԽ Մինսկի խմբի շրջանակներում վերսկսելու բանակցությունները, որոնք ընդմիջվել էին վերջերս, Լեռնային Ղարաբաղի «առավելաբար հայկական առանձնատարածքում» վերսկսված կռիվների պատճառով:

Սնայդերն ավելացրեց, թե ամերիկյան բանագնաց Ջեկ Մարեսկան ապրիլի 29-30-ը Մոսկվայում հանդիպել է Ռուսաստանի եւ Թուրքիայի բանագնացների հետ, ստեղծելու համար առանձնատարածքում էթնիկական բախումներին վերջ տվող մի նոր մոտեցում նախագիծ: Այդ նոր մոտեցումը, ամերիկյան բանբերի համաձայն, հակամարտ կողմերին հանձնվել է մայիսի 3-ին:

Սնայդերը շեշտեց, թե Մ. Նահանգները ղեկավար դեր են վերցրել այս հակամարտությունը լուծելու նպատակով: «Մենք հավատում ենք, ավելացրեց նա, որ Ռուսաստանի եւ Թուրքիայի հետ մեր սերտ համագործակցությունն ստեղծել է մի ամուր եւ հավասարակշռված մոտեցում, որը կարող է հիմք դառնալ ԵԱՀԽ շրջանակներում խորհրդակցություններին նոր մղում տալու համար»:

## Նամակ է հղվել Բուտրոս Ղալիին

Ստեփանակերտ, 4 մայիս, Սնարք: Երեկ ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյանը նամակ է հղել ՄԱԿի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիին: Ուղերձում մասնավորապես ասվում է, որ Ադրբեջանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջեւ մի քանի տարի շարունակվող հակամարտությունը հասել է այն սահմանին, երբ ամեն չմտածված քայլ կամ հայտարարություն կարող է սպառնալ շրջանում բնակվող մարդկանց անվտանգությանը: ԼՂՀ ղեկավարությունը բազմիցս կոչ է արել եւ կոչ է անում խաղաղության վերականգնման մեջ շահագրգռված միջազգային կազմակերպություններին եւ պետություններին դեկավարներին բաս զգույշ վերաբերել այն որոշումների ընդունմանը, որոնք ազդում են իրավիճակի զարգացման վրա:

Այդ կապակցությամբ ուղերձում մտահոգություն է հայտնվում ՄԱԿի Անվտանգության խորհրդի ապրիլի 30-ի որոշման վերաբերյալ, որը ԼՂՀ ղեկավարության կարծիքով, հաշվի չի առնում հաղթական իրականությունը, այն է՝ Լ. Ղարաբաղի Հանրապետության գոյության փաստը, ԼՂՀ բնակչության անվտանգության ապահովման հետ կապված նրա շահերը:

«ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի յուրաքանչյուր տեղաշարժը նպաստակ ունի միայն կանխել կամ չեզոքացնել Ադրբեջանի զինված ուժերի հարձակումը ԼՂՀ տարածքի վրա», նշվում է նամակում:

Վերջում Գեորգի Պետրոսյանը ԼՂՀ ղեկավարության անունից հավաստիացնում է Բուտրոս Ղալիին, որ իրենք հարգում են մարդու իրավունքների եւ միջազգային անվտանգության պահպանմանը նպաստող ՄԱԿի բոլոր սկզբունքները: Միաժամանակ նա հույս հայտնեց, որ ԼՂՀն կդառնա միջազգային հանրության լիիրավ անդամ: ■

Ճակատ

# ԿՐԿԻՆ ՀՐԵՏԱԿՈՉՎՈՒՄ Է ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՑՔԸ

*Ռազմական ուղղաթիռներ Ղարաբաղի երկնքում*

Երեկ եւ նախորդ գիշեր իրադրությունը Լեռնային Ղարաբաղի ռազմաճակատներում էական փոփոխություններ չի կրել: Այս մասին Ստեփանակերտից հաղորդում է մեր թղթակից ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ, վկայակոչելով ԼՂՀ ինքնապաշտպանության կոմիտեից ստացված տեղեկությունները: Միաժամանակ, ըստ նույն աղբյուրների, շարունակվում էին պարտիզանական գործողությունները Շահումյանի շրջանում, որտեղ նախօրեին հայկական հայդուկային ջոկատներին հաջողվել էր Խարխափուս գյուղի մերձակայքում ոչնչացնել թշնամու մեկ հետեւակի մարտական մեխենա, մեկ «Ուրալ» մակնիշի բեռնատար, մեկ մարդատար ավտոմեքենա եւ մի քանի տասնյակ ադրբեջանցի զինվոր:

Ըստ Լեռնային Ղարաբաղի ռազմական հետախուզության տվյալների, շարունակվում են ադրբեջանական բանակի մարտական տեխնիկայի եւ կենդանի ուժի կուտակումները ԼՂՀ հարավային եւ հարավարեւելյան սահմանների երկայնքով, ինչպես նաեւ Լաչինի մարդասիրական միջանցքի հարավային մասերում, ինչը ենթադրել է տալիս, թե առաջիկայում այս ուղղությամբ պետք է սպասել ադրբեջանական բանակի լայնածավալ հարձակում: Երեկ եւ նախորդ գիշեր Ադրբեջանի Ղարաբլիի շրջանի ռազմական հենակետերից ուժգին հրետակոծության են ենթարկվել Լաչինի մարդասիրական միջանցքի հարավային մասերի հայկական պաշտպանական դիրքերը: Միջանցքի անվտանգությունն ապահովող ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը պատասխան կրակ են բացել: Մանրամասնություններ ճշտվում են: Գորիս-Լաչին-Ստեփանակերտ ճանապարհը գործում է անխափան:

Միաժամանակ Սնարք գործակալությունը, վկայակոչելով ԼՂՀ լրատվության եւ մամուլի պետվարչությունից ստացված տեղեկությունները, հաղորդում է, թե երեկ ադրբեջանական բանակի երեք ռազմական ուղղաթիռներ խախտել են ԼՂՀ օդային սահմանը եւ բոմբեր կատարել Մարտունու շրջանի վրայով: Ամենայն հավանականությամբ թշնամու ուղղաթիռները փորձել են օդից գրոհել Մարտունու շրջանի Կուտրաղակինո գյուղի հայկական պաշտպանական դիրքերը, սակայն այդպես էլ չեն ռմբակոծել եւ առաջ լրել են Ղարաբաղի օդային տարածքը՝ վախենալով ԼՂՀ հակաօդային պաշտպանության ուժերի հարվածից: Ըստ նույն աղբյուրների, կրկին հրետակոծել են ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի դիրքերը Մարտունու եւ Հադրութի շրջաններում: Տուժածների մասին տեղեկություններ չկան:

Ադրբեջանական աղբյուրներ հաղորդում են, թե երեկ եւ նախորդ գիշեր Ղարաբաղի տարածքից հրետակոծվել են Ֆիզուլու, Աղդամի եւ Ղուբաթլիի շրջանները: Մանրամասնություններ չեն հաղորդվում: «Ազգ»

Պատերազմ

## Մեծ Բրիտանիայում Հայաստանի նկատմամբ առաջխաղացում

Երեկ կայացած մամուլի ասուլիսում Մեծ Բրիտանիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Արմեն Սարգսյանը, անդրադառնալով իր գործունեությանը, նշեց, որ զգալի աշխատանք է տարել ոչ միայն կառավարական շրջանակներում, այլեւ լրատվական միջոցների հետ հարաբերություններում: Գնահատելով Մեծ Բրիտանիայի քաղաքական կյանքը, դեսպանը հայտնեց, թե անգլիացիներին հետաքրքրող հիմնական ոլորտը Միացյալ Եվրոպան է եւ նրա առաջան: Մի այլ կարեւոր խնդիր է Հյուսիսային Իռլանդիայի հարցը, որն առնչվում է տարածքային ամբողջականության, ազգային ինքնորոշման իրավունքի եւ մարդու իրավունքների հետ: Ուսի, որն. Սարգսյանի կարծիքով, երբ դրվում է Ղարաբաղի հարցը, յուրաքանչյուր բրիտանացի քաղաքագետ այդ հարցն անցկացնում է «իր ոլորտի միջով»:

Միաժամանակ դեսպանը նշեց, որ լրատվության ասպարեզում Բոսնիայի խնդիրը ծածկում է մյուս հարցերը: Բայց Քելբաջարի դեպքերից հետո Ղարաբաղին նվիրված հոդվածների թիվն ավելացել է: Պրն Սարգսյանի գնահատմամբ, անգլիացիների առաջին վերաբերմունքը զարմանքն է, թե ինչպես ծանր վիճակում գտնվող հայ ժողովուրդը կարող է նման հաղթանակի հասնել: Դեսպանը հավաստիացրեց, թե իր կողմից մամուլում անհրաժեշտ հակահայկական ելույթներին հակահարված է տվել:

Նա նաեւ նշեց, թե ի տարբերություն նախկինի, այժմ Մեծ Բրիտանիայի արտգործնախարարությունում բացատրված են, թե ինչ է կատարվում շրջանում եւ որոշակի առաջխաղացում է նկատվում: Դեսպանն անդրադարձավ նաեւ բրիտանական նավթային ընկերությունների գործունեությանը, Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի հետ տարվող աշխատանքներին, ինչպես նաեւ դեսպանատան ներքին աշխատակազմի ու հնարավորություններին:

Ա. Հ.

Քաղաքական

## Ռաֆֆի Հովհաննիսյան. «Իմ հրաժարականը թելադրված էր դրսից»

«Անցամսյա լսությունից հետո, երեկ Հայաստանի նախկին արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը տվեց առաջին մամուլի ասուլիսը Երեւանի իր վարձու բնակարանում: Լսության հիմնական դատճառները նա համարեց երկուսը: Առաջին ազգային շահը: Նրա կարծիքով, դատիրազմական վիճակում գտնվող երկրում ոչ դիվանագիտական դերակատարի չափանիշները, ոչ իր քաղաքացիական դարտքը չդիտվի է թույլ տային, որ ինքը սրեր իրավիճակը: Եւ հիմա էլ նա հերքություն խնդրեց, թե լրիվ չի կարող բացել փակագծերը, որովհետեւ դեպք է մի քանի տարի ետ սդասել, որպեսզի ամբողջությամբ կիսվի լրագրողների հետ: Երկրորդ, ինքը որոշել է կառավարությանը հնարավորություն տալ, որպեսզի խուսափի այն քաղաքականությունը, որը դիտվում էր ճիշտ եւ որի հետ ինքը համաձայն չէր: Մինչդեռ, նախկին նախարարի կարծիքով, անցած վեց ամիսների ընթացքում խրազործվել է միակողմանի, անհեռատես քաղաքականություն, ինչն արդյունք է այն բանի, որ եւ դիվանագիտությունը, եւ քաղաքականությունը ձախողված են: Միաժամանակ Ռաֆֆի Հովհաննիսյանը արտգործնախարարության առաջին փուլի մոտեցումներն ազգային եւ դետական հարցերում համարեց ճիշտ եւ արդարացված:

Տես էջ 2

## Սահմանները կրկին կրակի տակ

Ադրբեջանը մտադիր չէ հրաժարվել Հայաստանի սահմանամերձ բնակավայրերն ու հայկական պաշտպանական դիրքերը հրետակոծելու սովորությունից: Մայիսի 3-ի երեկոյան զենքի տարբեր տեսակներից հրետակոծվել են Նոյեմբերյանի, Եղեգնաձորի եւ Արարատի շրջանների հայկական դիրքերը: Այս մասին հաղորդում են Հայաստանի պաշտպանության նախարարության լրատվական ծառայությունից: Ցայտահեղ անհրաժեշտության դեպքում հայկական ուժերը դիմել են պատասխան հարվածի գործողությունների: Հայկական կողմից տուժածներ չկան:

Իր հերթին, Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը տեղեկացնում է, թե Հայաստանի տարածքից հրետակոծվել են Ադրբեջանի Ղուբաթլիի եւ Զանգելանի, ինչպես նաեւ Նախիջեւանի Աղադարակի շրջանները: Ըստ նույն աղբյուրների, հրետակոծությունը հասկանալի ուժեղ է եղել Ղուբաթլիի շրջանում, որտեղ կան ավերածություններ: Տուժածների մասին տեղեկություններ չեն հաղորդվում: «Ազգ»

## Պարտիզանները հարձակվել են

Ստեփանակերտ, 4 մայիս, Սնարք: Մայիսի 3-ին Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Սարուխանի շրջանի Ներքին Գետաշեն գյուղի մոտ հայ պարտիզանները հարձակվել են ադրբեջանական զորքերի վրա: Հարձակման հետեւանքով ադրբեջանական զորքերը կրել են զգալի կորուստներ: Հայ պարտիզանները գրավել են զենք-զինամթերքի մեծ քանակ: Հարձակման ընթացքում զոհվել է հայ պարտիզան Գեղամ Ասատրյանը:

Քաղաքական

# Ռաֆֆի Հովհաննիսյան. «ԻՄ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ ԹԵԼԱԴՐՎԱԾ ԷՐ ԴՐՍԻՑ»

Սկիզբը էջ 1

Այնուհետև նախկին նախարարն անդրադարձավ իր առաջիկա քայլերին, հայտարարելով, որ մոտակա ամիսներին ծրագրում է Երևանում ստեղծել ազգային ռազմավարական վերլուծությունների հայկական կենտրոն: Նողաակը կլինի Հայաստանի կառավարության, հասարակական տարբեր հոսանքների համար դասդասել եւ մեկնաբանել ազգային հաղթականության եւ ռազմավարության հիմնարար խնդիրները, որը թույլ կտա ծրագրավորված ձեւով դասախոսան տալ մեր ազգին հուզող հրատաղ եւ հեռանկարային հարցերին: Նրա կարծիքով, կենտրոնը կառավարությանը հնարավորություն կտա օգտագործել նաեւ այլընտրանքային լուծումները, որոնցով Հայաստանը կարողանա դուրս գալ «իմպրովիզացիայի հաղթականությունից»:

Լրագրողների շուրջանակը հիմնականում առնչվում էր Հայաստանի արտաքին հաղթականությանը, տարբեր երկրների հետ հարաբերություններին, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին, որոնց Ռ. Հովհաննիսյանը արդեն անդրադարձել էր Եղեռնի 78-րդ տարեդարձին նվիրված երեկոյի ելույթում: Միակ ավելացումը բերեց այն էր, որ նախկին նախարարը չի նախատեսվում մասնակցել նախագահական ընտրություններին:

Ասուլիսի վերջում նախարարին դիմեցինք երկու հարցով:

**– Պրն Հովհաննիսյան, Ձեր ղեկավարության օրոք արտգործնախարարությունն ինչո՞ւիսի՞ սխալներ է թույլ տվել: Դուք ի՞նչ չկարողացաք անել:**

– Տարբեր «սխալներ» ունեցավ նախարարությունը: Առաջինն այն էր, որ երբ ես 1991 թ. հոկտեմբերին եկա, Հայաստանը Խ. Միության բաղկացուցիչ մասն էր, իսկ արտգործնախարարությունը նմանվում էր մի խեցու, որ աշխատում էին 10 հոգի՝ կատարելով արարողակարգի գործառույթներ. մենք սկսեցինք զրոյից. 10-ը դարձավ 120, բաժինները կազմավորվեցին եւ մի տարվա մեջ ծավալվեց աշխույժ հաղթականություն:

Այդ ժամանակ արդեն, երբ հարցումներ կատարվեն դրսի երկրներում, կտեսնեք, որ Հայաստանն իր փոքր չափերի համեմատ շատ մեծ հեղինակություն ուներ:

Կային դժվարություններ, որոնցից մենք դասդասված, արհեստավարժ դիվանագետներ չունեինք: Փաստորեն արտգործնախարարը ոչ միայն հանձն առավ հաղթականություն կերտումն ու իրագործումը, այլեւ իմաստ ու բովանդակություն հաղորդեց այդ շենքին, ի տարբերություն արտաստահմանում ընդունված կարգին, երբ նախարարը սկսում է աշխատել արդեն դասդասի դայմաններում: Իմ կարծիքով, այդ մեկ տարվա ընթացքում, համեմատած մեր քույր նախարարությունների հետ, բավականին մեծ առաջընթաց էր արձանագրվել, եւ իր բոլոր թերություններով հանդերձ նախարարությունը դարձել էր աշխատող մարմին, որը երբ կառավարության ճնշումը սաստկանար, կարող էր հզոր աշխատող նախարարություն դառնալ: Մյուս «թերությունը», որին ես այնքան էլ լրջությամբ չեմ մոտենում, այն էր, որ մեր նախարարության գործունեությունն իր գերակտիվությամբ, իր բազմաճակատ աշխատանքով ու հեղինակությամբ երեւի չէր համադասասխանում կառավարության այլ օղակների ակնկալվող աշխատանքին:

Այսինքն, մեր նախարարության կատարած ակտիվ աշխատանքը հակադրվում էր այլ ասդարեզների կրավորականությանը: Այդ տեսակետից ես մի անգամ էլ ասեմ, որ Հայաստանում շարժուն, գործող արտգործնախարարությունը չէր համադասխանում կառավարության որոշ շրջանակների, ինչպես նաեւ նրանց հովանավորների եւ որոշ հարեւանների շահերին: Դրա համար էլ ի թիվս այլ դատճառների, կայացավ իմ հրաժարականը, որը դրսից էր բերադրված Հայաստանին:

**– Սոցիոլոգիական տվյալների համաձայն, Ձեր անունը Հայաստանի հաղթական գործիչների շարքում զբաղեցնում է 3-րդ տեղը: Արդյոք այդ փա՞սը դատճառ դարձավ, որդեսզի Դուք վերսկսեք հասարակական-հաղթական գործունեությունը, դրանով նդատելով Ձեր հեղինակության բարձրացմանը:**

– Ես չեմ կարծում, որ հեղինակության խնդիր ունեմ: Եղեռնի տարելիցի ելույթը եւ մամուլի ասուլիսը ծրագրված էին մինչ այդ հարցումների հրատարակումը: Ես ինքս նորմալ եմ վերաբերվում այդ հարցումներին, բեւ չգիտեմ, թե ինչպես է դա արված: Ինձ համար մեծ դատիվ է, որ 3-րդ տեղն եմ գրավում նախագահից եւ նախկին առաջին քարտուղարից հետո: Համենայնդեպս, հայ ժողովրդի տարբեր զանգվածների հետ վերջին վեց ամսվա ընթացքում ունեցած շփումներս թույլ են տալիս եզրակացնելու, որ կարող են այդ հարցման արդյունքները չհամադասասխանել իրական վիճակին: Որովհետեւ ինձ թվում էր, թե հայ ժողովուրդն ինքը կգնահատի իմ աշխատանքը: Ուղղակի, վեց ամսվա լռությունից հետո որոշեցի հանդես գալ եւ հանրության առջեւ շարունակել իմ գործունեությունը:

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ

Մեկնում

# Պոլսահայ լրագրողի մահը

Կիրակի, մայիսի 2-ին, Պոլսում իր մահկանացուն է կնքել դոլսահայ հայտնի լրագրող, հրադարակագիր, հասարակական գործիչ Հակոբ Սվազլյանը, 71 տարեկան հասակում: Քաջածանոթ հայերենին թե թուրքերենին նա բազմաթիվ բդրակցություններ, հրադարակագրական էջեր ու հոդվածներ է հրատարակել տեղի հայկական ու թուրքական մամուլում, իր անվան շուրջ ստեղծելով խիզախ, խիստ հրադարակագիր, խնդրահարույց եւ մանրախնդիր լրագրողի մի հանրաճանաչ կերպար: Խմբագրել եւ հրատարակել է դոլսահայ մի շարք թերթեր՝ «Նառադայթ», «Լույս», «Պայքար» շաբաթաթերթերը, առժամանակ մաս է կազմել «Մարմարա» օրաթերթի խմբագրական անձնակազմի, իսկ ավելի ուշ՝ «Ժամանակ» օրաթերթում, միաժամանակ հասարակական կարգով դասեռոններ վարելով, համայնքների դրդմամբ մի քանի այլ դոլսահայերի հետ մեկնել է Մ. Նահանգներ, Կոնգրեսի շրջանակներում աշխատանք տանելու Հայկական գեղասդանությունը դատարտող հայտնի բանաձեւի ընդունման... դեմ: Հ. Սվազլյանն իր գրություններում ու ելույթներում եղել է անբարոյ թուրքանաց, հատկապես հայ-թուրքական հակամարտության հարցում ընդունելով թուրքական կողմին նդատավոր «հավասարակշռված» դեր, որը նրան դարձրել է թուրքական մամուլի ու կառավարության կողմից ընդունված անձ, մանավանդ հայ երիտասարդների հակաբուրք գինյալ գործունեության տարիներին, միաժամանակ դոլսահայության համար կատարելով հակահայ քարոզչության ծայրահեղությունը մեղմացնողի, երբեմն նույնիսկ դրա հետեւանքներից փրկողի դեր:

Հ. Ա.

Դարձ

# Անգլիական եւ հայոց հոգեւոր տերերի միացյալ հաղորդությունը

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրավերով Հայաստանում գտնվող Քենտերբերիի արքեպիսկոպոս դոկտ. Ջորջ Կեյրին եւ Ամենայն հայոց հայրապետ Վազգեն Ա-ն ստորագրել են միացյալ հաղորդություն մայիսի 1-4-ը աստվածաբանական եւ այժմեական տարբեր նյութերի շուրջ իրենց եւ ընկերակցող դասվիրակությունների միջեւ կայացած հանդիպումների, կատարած դաշտանական այցելությունների մասին: Հաղորդության մեջ առանձնաձեւ կարեւորվել է Անգլիական եկեղեցու դեսի կատարած այցը 1915 թ. ցեղասդանության զոհերի հուշահամալիր, Գյումրի քաղաքում լորդ Բայրոնի անվան դդրոցում աշակերտների ու ծնողների, ինչպես նաեւ Ս. Էջմիածնի հոգեւոր ծեմարանում ուսանողության եւ ուսուցչական կողմի հետ ունեցած հանդիպումները:

Անգլիական եկեղեցու դեսը, ինչպես նշվում է հաղորդության մեջ, խոստացել է հայ եկեղեցականների աստվածաբանական հետագա դասդիարակության գործում շարունակել օժանդակել հայ եկեղեցուն, բարձրագույն կրթության համար հրավիրելով հոգեւորականների: Վազգեն կաթողիկոսը բարձրաստիճան հյուրի հետ իր խորհրդակցություններում երախտագիտություն է արտահայտել բրիտանական ժողովրդին ու կառավարությանը կործանիչ երկրաշարժից հետո ցույց տված մարդասիրական օգնության համար, որի առհավատյան ոչ միայն Գյումրիի Բայրոնի անվան դդրոցն է, այլեւ Կիրովականում ս. Նարեկ մանկական հիվանդանոցը:

Ամենայն հայոց հայրապետը հույս է հայտնել, որ Անգլիական եկեղեցին իր ազդեցությունն ի գործ կդնի տարբեր երկրների կառավարությունների մոտ՝ Հայաստանում եւ Ղարաբաղում խաղաղությունը վերահաստատելու գործում, մինչ արքեպիսկոպոսն իր տխրությունն է արտահայտել հակամարտության շարունակվող ողբերգության նկատմամբ:

Հոգեւոր դեսերը միմյանց վստահություն են հայտնել, թե եկեղեցիների համաշխարհային խորհրդի շրջանակներում, ինչպես նաեւ միջեկեղեցական մյուս ասդարեզներում կշարունակվի ամենատես համագործակցությունը երկու եկեղեցիների միջեւ:

«Ազգ»

# Հայաստանում ֆաշիզմի դեմ հաղթանակի տոն չի լինի

**Երեւան, 4 մայիս. Սնարք.** Հաղթանակի տոնի վերականգնումից Հայաստանի խորհրդարանի հրաժարումը խայտառակ քայլ անվանեց Հայաստանի դատերազմի, աշխատանքի եւ զինված ուժերի վետերանների խորհրդի նախագահությունը: Հայ ժողովրդին ուղղված իրենց դիմումի մեջ վետերանները խստորեն մեղադրել են Գերագույն խորհրդին այն 300 հազար հայերի հիշատակի անարգման մեջ, որոնք զոհվեցին Հայրենական մեծ դատերազմի մարտադաշտերում:

Օրերս Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը հրաժարվել էր ընդունել մի խումբ վետերանների, որոնց գլխավորում էր խորհրդային Միության հերոս, գեներալ Աշոտ Ղազարյանը: Նա խնդրագիրը վկայակոչել էր իր գրպանածությունը: Սակայն նախագահին հանձնած հանրագրով վետերանները նրան խնդրել էին հրավիրել Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահությունը՝ որպես անվանական քվեարկությամբ դետք է լուծվեր մայիսի 9-ը տոնական օր ճանաչելու հարցը: Վետերաններն առայժմ դատասխան չեն ստացել, սակայն դատրաստվում են մայիսի 9-ին հիշատակի եւ բողոքի հանրահավաք անցկացնել Անհայտ զինվորի հուշարձանի մոտ: ■

# Դատավարությունը եւս մի անգամ ընդմիջվեց

ՀՀ Գերագույն դատարանի կոլեգիան երեկվա դատական նիստում եւս չկարողացավ ավարտին հասցնել ադրիլի 28-ին սկսված մասիսցի դդրոցականների դատավարությունը:

Երկու այլ վկաների՝ միլիցիայի մեքենայում դեդի կատարման ժամանակ գտնվող եւս երկու աշխատակիցների՝ դետավտոտեսչության տեսչների ցուցմունքներից հետո դատավարությունը հետաձգվեց երկու օրով:

«Ազգ»

Դարձ

# «Միսիա Արեւելքը» Ղարաբաղում եւ նրա մասին

Շատ է խոսվել այն մասին, որ Ղարաբաղի դատերազմը նաեւ քարոզչական դատերազմ է, եւ ի տարբերություն իրական ռազմաճակատի, այստեղ մենք ավելի հաճախ դարտվում ենք: Ցանկալի է թե ոչ, բայց Ղարաբաղի դատերազմում շատ բան Արեւմուտքից է կախված, իսկ Արեւմուտքն ավելի հաճախ կամ ընդհանրադես դատկերացում չունի հակամարտության բնույթի եւ արմատների մասին, կամ այդ մասին դատկերացում է կազմում ադրբեջանամետ հրադարակումներից, որոնք թուրքական քարոզչական մեքենայի աղեղն լավ կազմավորված ցանցի միջոցով հեղեղում են արեւմտյան մամուլն ու հեռուստատեսությունը:

Բայց միշտ չէ, որ Արեւմուտքում տդագրվող հոդվածներն ու հրադարակումները կողմնակալ բնույթ են կրում: Հայաստանում է գտնվում դանիացի բժիշկ, «Միսիա Արեւելք» կազմակերդության անդամ Կիմ Հարցեր, որը մի քանի օր առաջ է վերադարձել Ղարաբաղից, իսկ մինչ այդ բազմաթիվ անգամներ եղել է Հայաստանում եւ մի քանի ընդարձակ հրադարակումներով փորձել դանիացի ընթերցողներին ներկայացնել Ղարաբաղի դատերազմի իրական բնույթն ու դատմական արմատները: Կազմակերդությունը, որը Ռուսաստանին, Ուկրաինային, Հայաստանին, Ալբանիային, Խորվաթիային եւ Ռումինիային 280 տոննա սնունդ եւ, բացի այդ, 78 միլիոն դանիական կրոնի (մոտ 12 միլիոն դոլար) ընդհանուր արժեքությամբ մարդասիրական օգնություն է ցուցաբերել, Հայաստան է ուղարկել մեկ զինվորական հոսդիտալ իր բոլոր տարավորություններով, որի մեծ մասն արդեն Հայաստանում է: Հայաստանի աշխատանքի եւ սոցիալական աղահովության նախարարությունը, որի հասցեով ասացվել է օգնությունը, այն դրել է կառավարության տրամադրության տակ, որն էլ որոշել է հոսդիտալը կազմակերդել Միսիանում: Բացի այդ, ներկայումս Հայաստան է ուղարկվում 17 կոնտեյներ մարդասիրական բնո՝ հիմնականում բժշկական տարավորություններ, դեղորայք, սնունդ եւ հագուստ, որը կտրամադրվի ինչպես Ղարաբաղի, այնպես էլ Հայաստանի կարիքավորներին:

«Մենք կցանկանայինք օգնել ոչ միայն Հայաստանին եւ Ղարաբաղին, այլեւ Ադրբեջանին, սակայն լինելով Հայաստանում, համոզվեցինք, որ այս դատերազմում տուժողներն արյուն է հոսում»:

Դանիացի բժիշկն այցելել է Երեւանի, Կրասնոսելսկի, Ստեփանակերտի եւ Մարտակերտի շրջանի հոսդիտալները: «Վիճակն սահավոր է: Մարտակերտի շրջանի դաշտային հոսդիտալում դեղերը լցված են ուղղակի հատակին, ամենահիմնական դեղամիջոցները դարզապես չկան: Ղարաբաղում հանդիպեցի մի անգլիացի բժշկի, որն ուսումնասիրություններ էր կատարում եւ եկել էր այն եզրակացության, որ մասնավորապես երեխաների վիճակը Մարտեռյում շատ ավելի լավ է, քան Ղարաբաղում: Նույնդիսի ծանր վիճակ է նաեւ Հայաստանի հոսդիտալներում: Համեմատաբար բարվոք վիճակում է Ստեփանակերտինը, սակայն ընդհանուր վիճակն այնուամենայնիվ սահավոր է»:

Պրն Հարցերի խոսքերով, իրենց կազմակերդությունն առաջիկայում ձգտելու է հասնել այն բանին, որ Դանիայի կառավարության կողմից ցուցաբերվող մարդասիրական օգնության հարցում առաջնությունը տվի ոչ թե Ռուսաստանին, այլ Հայաստանին: Նրա հոդվածներում Ղարաբաղի դատերազմից բացի խոսվում է նաեւ Ադրբեջանի կողմից լիակատար շրջափակման հետեւանքով Հայաստանում ստեղծված ծանր իրավիճակի մասին: «Եւ այնուամենայնիվ, իմ կարծիքով, կարեւոր է ոչ միայն մարդասիրական օգնությունը, այլեւ քարոզչական աշխատանքը, ասում է դանիացի բժիշկը: Ադրբեջանը հայտարարում է, թե հայերը գրավել են իրենց տարածքի 10 տոկոսը, եւ աշխարհը դա միանշանակ է ընկալում: Մինչդեռ ոչ ոք չգիտե, որ այդ տարածքի 10 տոկոսի վրա արդեն մի քանի հազար տարի է, ինչ հայեր են ադրում, եւ այդ տարածքներ վաղուց են վերահսկվում հայերի կողմից: Ադրբեջանը հայտարարում է, թե հայերը փորձում են գրավել Ֆիզուլին եւ հասնել Իրանի սահմանին, մինչդեռ ոչ ոք չգիտի, որ Ֆիզուլին ոչ թե Իրանի սահմանին է կդած, այլ Ղարաբաղի: Մի խոսքով, Արեւմուտքում ադրբեջանամետ քարոզչությունը բավականին ուժեղ է, եւ շատ կարեւոր է ճշմարտությունն ասելը»:

Կիմ Հարցերը Ղարաբաղում հանդիպել է բազմաթիվ մարդկանց եւ համոզվել, որ նրանց մեջ ադրբեջանցիների նկատմամբ ատելություն չկա, նրանք բոլորն էլ խաղաղություն են ուզում: «Ես կարծում էի, թե Ղարաբաղում ամիսներ շարունակ նկուղներում դատաղարված, ամեն օր հրետակոծության տակ գտնվող մարդկանց կյանքը դարձած կլինի չար, ցդային, հուսահատ, բայց տեսա վերին աստիճանի հյուրասեր ու կենսախնդ մի ժողովուրդ: Ռազմաճակատի երկու կողմերում էլ ամենաշատ խաղաղ բնակչությունն է տուժում: Ցավոք է, եւ դրա ռազմաճակատի միայն հայկական կողմում (անկեղծ ասած վախենում մյուս կողմն անցնել), բայց համոզված եմ, որ այնտեղ նույնդես վիճակն սահավոր է: Արեւմուտքը խիստ մտահոգված է հակամարտության նման տեղական օջախներով, որոնք կարող են վերածվել մեծ դատերազմի, ուստի դետք է ամեն ինչ անել հարցի խաղաղ կարգավորման համար: Եւ Հայաստանի, եւ Ղարաբաղի իշխանություններին մոտ ես նման դատրաստակամություն տեսա»:

Անշուշտ, Արեւմուտքն ունի իր շահերը, եւ Հայաստանի համար դժվար է ազդել դրանց վրա: Սակայն գոյություն ունի նաեւ հասարակական կարծիք, եւ հենց այստեղ է, որ Հայաստանը միանգամայն ի վիճակի է լույն գործունեություն ծավալել, մանավանդ, որ առանձնաձեւ մեծ ջանքեր դետք չեն անհրաժեշտ է դատարգելս ներկայացնել ճշմարտությունը: Շրջափակման մեջ գտնվող, աղքատ ու հուսահատ ժողովրդի լուսադակից գեղադասելի չէ՞ արդյոք իր ազատության համար դայքարող (եւ հերոսաբար դայքարող) ժողովրդի համբավը:

ԱՐԱՄ ԱՐՈՒԹՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Կարծիք

# ՉԳՈՒՅՇ, ԴԵՂԵՐ ԵՆ

Նկատի ունենալով, որ մասնավոր բիզնեսը շատ երբոռեն է զգում դահանջարկը եւ անմիջականորեն էլ արձագանքում, հանրառեռությունով մեկ դեղակրդակների, դեղասեղանիկների, դեղանկյունների, դեղամայրերի տարածումը նախեւառաջ հիվանդ ազգ դառնալու վտասն է արձանագրում: Այո, որքան էլ մեզ հույս տանք, թե ձմռան հետ սարսափելի օրերը հետեւում մնացին, իրականություն մոայլ է: Եվ երբ մարմնական ցավերը անտանելի են դառնում, կամա թե ակամա հայացքներս սկզբում բժիշկներին, հետո, նրանց բարի խորհրդով, նաեւ դեղատներին ենք զցում:

Ինչպես տեղեկացանք ՀՀ առողջապահության նախարարության ոչ այնքան վաղուց դեղատնային վարչություն կոչված, իսկ այժմ «Հայդեղագործություն» ոլեսական ձեռնարկության տնօրենի առաջին տեղակալ Ալբերտ Սահակյանից, բոլոր դեղատներն ինքնուրույն գործելու իրավունք ունեցող ձեռնարկությունների են վերածվել: Նման բայլի գնալու հիմնական պատճառաբանությունը շրջափակման գործոնով է բացատրվում՝ ոլեսությունը չկարողանալով անհրաժեշտ տեսակների եւ քանակ ապահովել, պահանջարկը բավարարելու հնարավորությունները փոխանցել է դեղատների վարիչներին: Բժշկական կրթության մարդկանց բիզնեսմեններ «սարքելու» այս փորձը բավականին հաջողությամբ է ընթացել՝ որն Սահակյանի վկայությամբ, հանրառեռությունն այլեւս դեղերի պակաս չի զգում:

Անշուշտ, այս նվաճման մեջ իրենց լուրջ ներդրումն ունեն նաեւ ձեռներեցները ու մարդասիրական օգնությունը: Բայց եթե անգամ ընդունենք, որ «քանակի» հարցում բավարարվածությունը լիակատար է, արդա կարելի՞ է նույնը ասել «որակի» խնդրում: «Դեղատներում այդ, քանզի այնտեղ առանց մասնագիտական եզրակացության ոչ մի դեղ չի ընդունվում եւ բացի այդ, հաճախակի ստուգումներ են կատարվում», հավատացրեց Ալբերտ Սահակյանը: Սակայն նույն նախարարության դեղաբանության, բժշկական սարքերի եւ տեխնոլոգիաների գիտափորձարարական տեսչության (Հայդեղտեսչություն)) փոխնախագահ Իրինա Ղազարյանի հետ զրույցից պարզվեց, որ գայթակղվելու նկատմամբ իմունիտետը դեղատների վարիչների շրջանում այնքան էլ զարգացած չէ, եւ նրանց մի մասն առանց անհրաժեշտ վաստաթղթերի առկայության անհատ անձանցից մեծաքանակ դեղեր է գնում եւ վաճառում:

### Ճարտիկ դեղեր

Դեղեր վաճառելու մենաշնորհն այլեւս միայն ոլեսությանը չի պատկանում: Եվ այժմ, ով կարող է ապացուցել, որ դեղերը պահելու համապատասխան պայմաններ ունի, առողջապահության նախարարությունից բիզնեսի այս տեսակով զբաղվելու մերժում չի ստանում: Պարզ է, որ այս դեղումում արդեն հիմնական տանող ուժը նորին մեծություն «շահն» է դառնում: Եվ թեեւ ոլեսությունը վերահիշյալ տեսչության միջոցով ձգտում է անհրաժեշտ վերահսկողություն սահմանել, բայց դա այնքան էլ արդյունավետ չի ստացվում: Նախ Հայդեղտեսչության հնարավորություններն են սահմանափակ՝ աշխատողները, տրանսպորտի միջոցները եւ բենզինը փիչ են: Եվ երկրորդ, դեղերի ներբերման պատշաճված ուղիները շրջանցելու հնարավորություններից ավելի փիչ են: Բանն այն է, որ ըստ գործող կարգի, բեռնատար ինքնաթիռներով բերված դեղորայքը մասնագետների կողմից անպայման ստուգվում է, իսկ ուղեւորատարները՝ ոչ: Եթե հաշվի առնենք, որ Գյումրիի օդանավակայանում ընդհանրապես վերահսկողություն չկա, իսկ ճանապարհները բավականին թափանցիկ են, ապա դատկերը բավականին տխուր է ստացվում: Արդյունքում մեծ դահանջարկ ունեցող դեղերը հայտնվում են կրդակներում, սեղանիկների եւ մայթերի վրա: Այս երեւույթի դեմ ինչ-որ չափով միայն Երեւանում է դայքար մղվում՝ առողջապահության նախարարության աշխատողների դահանջով մի քանի դեղատեղանիկի տերեր են ձերբակալվել, որոնցից բռնագրավված հաբերն ու փոշիները, մեղմ ասած, հեռու են եղել բնական վիճակից: Սակայն փոդոցներով քայլելիս ուշադիր մի հայացքն էլ բավական է, որպեսզի նաեւ այս հարցում իրավադահ մարմինների գործունեության արդյունավետության մակարդակը դարզ լինի...

Այս հայեցակետից վիճակը բարվոք չէ նաեւ մարդասիրական օգնության հարցում: «Այդ երկրներից անվարձահատույց ստացվող մեծաքանակ դեղորայքը, իրոք, մեծ աջակցություն է մեր հանրառեռությանը: Բայց սա հարցի մի կողմն է, մյուս կողմից, այդ դրեղարատները գրանցված չեն Հայաստանում, այսինքն մենք դրանց հատկությունների մասին տեղեկություններ չունենք: Եվ երկրդ, դեղերը բերվում են առանց որակի փաստաթղթերի, ինչը թույլ չի տալիս երաշխավորել նրանց լիարժեք ազդեցությունը: «Կա լուրջ բերացում է, քանի որ Առողջապահության համաշխարհային կազմակերդությունը, ելնելով դեղերի կեղծման բազմաթիվ փաստերից, մշտապես զգուշության կոչ է անում», ցավով ավելացրեց տիկ. Ղազարյանը:

### Առողջապահության նախարարությունը զգուշացնում է...

Իսկ ո՞րն է դրությունից դուրս գալու ելքը: Եվ «Հայդեղագործություն» ոլեսական ձեռնարկությունում, եւ Հայդեղտեսչությունում նշեցին, որ քանի դեռ համապատասխան օրենքներով եւ իրավական ակտերով կարգավորված չեն դեղերի արտադրության, ներմուծման եւ վաճառքի նորմատիվային փաստաթղթերը, միակ միջոցը կասկածելի անձանցից գնումներ չկատարելն է: Բայց չէ որ հիվանդներն ընտրության հնարավորություն չունենալով ստիպված են նման բայլի գնում: Եվ հետո, ինչպես երեւում է, այս խնդրում շահագրգիռ մարմիններն էլ տրամադրված չեն համապատասխան բացատրական աշխատանք տանելու, առայժմ դեղորայքի բացակայությունը հասարակայնությունն ավելի հիվանդագին է ընդունում, քան դրանց անվերահսկելի վաճառքը:

Ցիշ է, վերջին ժամանակներս դրական տեղաշարժեր են նկատվում. Ալբերտ Սահակյանը տեղեկացրեց, որ Պրահայից 60 անուն դեղեր են գնվել: Բացի այդ, կառավարությունն այդ նպատակների համար «Հայդեղագործություն» ձեռնարկությանը 250 մլն վարկային էմիսիա է տրամադրել, սակայն երկարատեւ կայուն առդահովվածության մասին խոսելը դեռ վաղ է: Եթե նկատի ունենանք հանրառեռությունում քիմիական արդյունաբերության մեծ ներուժը, առդա անհավանական չեն թվում նաեւ լայն ծավալներով դեղագործությամբ զբաղվելու կառավարության ծրագրերը: Միայն թե դա վաղվա օրն է: Իսկ ինչպես հայտնի է, կորսված առողջության վերականգնումը հաղարդումներ չի հանդուրժում:

ՀՈՎՍԵՓ ՊՈՂՈՍՅԱՆ

**Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի կարգադրությամբ** 3 միլիոն ռուբլի է հատկացվել Վանաձորի ռուսական եկեղեցու վերականգնման համար: Նա կառավարությանը հանձնարարել է տրամադրել այդ միջոցները ռեզերվային ֆոնդից:

**Երեւանի նախագահությունը նախապատրաստում է քաղխորհրդի առաջին գումարման 5-րդ նստաշրջանի աշխատանքները, որոնք ՀՀ Գերագույն խորհրդի հիսերի դահլիճում կսկսվեն մայիսի 6-ին:** Օրակարգն ընդգրկում է մի շարք կարեւոր հարցեր՝ Երեւան քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի եւ բյուջեի հաստատումը, Երեւան քաղաքում աղբահանի շինարարության մասին, 1993-94 թթ. ձմռանը նախապատրաստվելու ծրագրի եւ այդ ուղղությամբ կատարված եւ կատարվելիք աշխատանքների մասին, ինչպես նաեւ կազմակերպական հարցեր: «Ազգ»

# Հայաստանի Ամերիկյան Համալսարան

*ՀԱՀ-ը առաջարկում է սեմինար «Երկրաշարժի դասերը եւ նրա հետազոտությունը» թեմայով: Այն կվարի Կալիֆոռնիայի Բերկլիի համալսարանի պրոֆեսոր, կառուցվածքային ճարտարագիտության դասվավոր պրոֆեսոր Վիտելմո Բերտերոն:*

Սեմինարը նվիրված է երկրաշարժերի բնությանը եւ նրանց ծագման պայմանների ուսումնասիրությանը, որոնք ստեղծում են քաղաքային եւ գյուղական վայրերի սեյսմիկ ակտիվությանը նպաստող պայմաններ: Սեմինարի ընթացքում սեյսմիկ ակտիվության վերահսկման համընդհանուր խնդրի հետ զուգընթաց կքննարկվեն նաեւ սեյսմիկ ճարտարագիտության դերը եւ նշանակությունը, մասնավորապես սեյսմակայուն նախագծումը եւ կառուցումը:

● Հատուկ ուշադրություն կդարձվի երկրաշարժերին դատրաստ լինելու միջոցառումների համակարգին: Վերջին տասնամյակի ընթացքում ունեցած իրադարձությունների վերլուծությունը ցույց է տվել, որ սեյսմիկ ակտիվությունը ոչ թե նվազել, այլ աճել է: Վերջին երկրաշարժերից ստացված տվյալներն ու հետազոտությունների արդյունքները ի հայտ բերեցին այդ ակտիվության պատճառները: Բացի այդ ակնհայտ է, որ երկրաշարժերի դասերին պատշաճ կարեւորություն չի տրվում, եւ նրանք արագ կերպով մոռացվում են: Հետեւաբար, կխոսվի սեյսմակայուն շինությունների վերահսկողության ծրագրի ստեղծման անհրաժեշտության մասին, որը իր հերթին կդահանջի տարբեր բնագավառների մասնագետների միացյալ գիտելիքներն ու ծիգերը:

● Կտրվեն սեյսմակայուն նախագծման մեջ նոր կառույցների օգտագործման վերլուծությունն ու գոյություն ունեցող կառույցների ուժեղացման ուղիները:

Կորոշվեն արագ լուծում դահանջող խնդիրները: Հատուկ ուշադրություն կդարձվի սեյսմակայուն նախագծման հիմնական սկզբունքների ձեւակերդման եւ կիրառման հարցերին, հատկապես սեյսմակայուն կառույցների բնագավառում:

● Կառաջարկվի կոնցեդտուալ մեթոդոլոգիա նախագծի թվային մասի համար: Այդ հիմնված կլինի ստուկտուալ դինամիկայի, սիստեմային հնարավորությունների մեխանիկայի համընդհանուր նախագծման հիմնարար սկզբունքների եւ կիրառման հարցերին, հատկապես սեյսմակայուն կառույցների բնագավառում:

● Կառաջարկվի կոնցեդտուալ մեթոդոլոգիա նախագծի թվային մասի համար: Այդ հիմնված կլինի ստուկտուալ դինամիկայի, սիստեմային հնարավորությունների մեխանիկայի համընդհանուր նախագծման հիմնարար սկզբունքների եւ կիրառման հարցերին, հատկապես սեյսմակայուն կառույցների բնագավառում:

● Կառաջարկվի կոնցեդտուալ մեթոդոլոգիա նախագծի թվային մասի համար: Այդ հիմնված կլինի ստուկտուալ դինամիկայի, սիստեմային հնարավորությունների մեխանիկայի համընդհանուր նախագծման հիմնարար սկզբունքների եւ կիրառման հարցերին, հատկապես սեյսմակայուն կառույցների բնագավառում:

## Զեկուցողի մասին

Պրոֆեսոր Բերտերոն աշխարհում սեյսմաճարտարագիտության հայտնի մասնագետ է, Կալիֆոռնիայի համալսարանի-ճարտարագիտության վաստակավոր պրոֆեսոր: Դասավանդում է Հայաստանի Ամերիկյան համալսարանի դասվավոր պրոֆեսոր խորհրդատու, որտեղ եւ վարում է դասախոսությունների շարք:

Մասսաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտն ավարտելուց հետո դոկտոր Վ. Բերտերոն երկար ժամանակ աշխատել է որդես հետազոտող եւ խորհրդատու սեյսմակայուն կառուցվածքների նախագծման բնագավառում: Նա ամերիկյան եւ միջազգային ասոցիացիաների անդամ է եւ ունի բազմաթիվ դարգեւներ սեյսմաճարտարագիտության զարգացման բնագավառում զգալի ներդրումների համար:

*Սեմինարը տեղի կունենա հինգշաբթի օրը, մայիսի 6-ին, 1993, երեկոյան ժամը 4.00-5.50: Այն կընթանա անգլերեն լեզվով, միաժամանակյա թարգմանությունը ապահովվում է:*

Մեր հասցեն է՝ 375019, Սարալ Բաղրամյան պողոտա 40:

Կարծիք

# ՄԱԿ-ի ներկայացուցիչները Սուխումում

**Սուխում, 4 մայիս. Մնարտ:** Աբխազիայի մայրաքաղաքում է գտնվում ՄԱԿ-ի ներկայացուցիչների խումբը Պյեր Կարուսրենի գլխավորությամբ: Խմբի կազմում են նաեւ ՄԱԿ-ի մարդասիրական դեղարտաքնեցի նախագահ Պյոտր Օրլովը եւ Վրաստանում Ռուսաստանի դեսպանության խորհրդական Ալեքսանդր Յակովենկոն: Ինչպես հաղորդեցին Սնարտի թղթակցին Աբխազիայի լրատվական-վերլուծական կենտրոնում, ՄԱԿ-ի ներկայացուցիչների այցը պայմանավորված է Ռուսաստանի արտգործնախարարության հայտագրով, որի մեջ առաջարկվում էր առաջացնել մարդասիրական օգնության ցուցաբերման եւ վրաց-աբխազական հակամարտության գոտուց, մասնավորապես Տղվարչելիից, բնակչության էվակուացման հետ կապված հարցերի լուծումը:

Աբխազիայի պաշտպանության խորհրդի նախագահ Թամազ Նադարեիշվիլի, աբխազական կառավարության պատգամավորական կորպուսի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ ամենամոտ ժամանակներում Աբխազիա կժամանի ՄԱԿ-ի փորձագետների խումբը՝ Տղվարչելում ստեղծված իրավիճակն ուսումնասիրելու եւ մարդասիրական օգնություն ցուցաբերելու գործում:

Միեւնույն ժամանակ, Աբխազիայում վրացական զինված ուժերի մասուլի կենտրոնի հաղորդագրության համաձայն, մայիսի 3-ին ՄԱԿ-ի առաքելությունն ընկավ հրետակոծման տակ: Կրակում էին Ներին Էբերա գյուղի կողմից, ուր գտնվում է Ռուսաստանի պաշտպանության նախարարության սեյսմիկ լաբորատորիան: Հրետակոծման հետեւանքով զոհվել է 10 եւ վիրավորվել 12 բնակիչ: Առաքելության ղեկավար Կարուսրենը պաշտոնական բողոք ներկայացրեց Գուդաուտայի ղեկավարությանը, պահանջելով դադարեցնել նման գործողությունները: Նա բողոք է ներկայացրել նաեւ վրացական կողմին:

# Կկառուցվեն նոր թաղամասեր

Ֆրանսիայի հասարակական «Շեն» կազմակերդության նդաստակը Հայաստանի Հանրառեռության լիալի գյուղերի վերականգնումն ու վերաբնակեցումն է: Կազմակերդությունը դեռեւս մինչեւ Գորիսի շրջանի հրետակոծությունը նախատեսել էր Ներին Խնձորեսկ, Խոզնավար, Հին Մաղանջուղ, Կյորու գյուղերում կառուցել նոր թաղամասեր: «Թաղամասի կառուցման նախագծերը պատրաստ էին, սկսվել էին շինարարական աշխատանքները, ասում է հեղինակը՝ շրջանի գլխավոր ճարտարապետ Մեսրոպ Հարությունյանը, Ներին Խնձորեսկում նախատեսված էր կառուցել 12 բնակելի շենք՝ մանկապարտեզով, առեւտրի օբյեկտներով, երիտասարդության հանգստի կենտրոնով: Կարված քաղաքական իրադրության հետ, ժամանակավորապես դադարեցվել էր նոր թաղամասերի կառուցումը»: Պատգամավորների շրջանային խորհրդի նախագահի տեղակալ Արա Դոլոնցը նշեց, «Այսօր սահմանամերձ կիզակետեր են այն գյուղերը, որոնցում նախատեսվել է կառուցել նոր թաղամասեր: Չնայած այդ ամենին, Խոզնավարում արդեն 2 բնակելի տուն է կառուցվել եւ շարունակվում են շինարարական աշխատանքները: Խնձորեսկում կառուցված 1 բնակելի տունը հրետակոծությունից ավերվել է, եւ ժամանակավորապես դադարեցվել են շինարարական աշխատանքները, այնպես որ նոր թաղամասերի կառուցումն ուժի մեջ է, սահմանամերձ այդ գյուղերի բնակիչները ամուր են կանգնած իրենց հողին:

ՀԱՍՄԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ
Մեր սեփ. թղթակից, Գորիս

**Հայաստանում գործազրկության մակարդակը կաճի եւ կկազմի 7.5 տոկոս, որը մոտավորապես համադատասխանում է Եվրոդայի զարգացած երկրների միջին ցուցանիշին:** Ինչպես Սնարտի թղթակցին հայտնեցին հանրառեռության կենսոմիկայի նախարարությունում, ենթադրվում է, որ այս տարի մոտ 150 հազար մարդ աշխատանքի բորսաներին կդիմի գործազրկության նդաստ ստանալու համար:

Մեկնաբան

# Թուրք լրագրողն սդառնում է. «Հայերի թիվը թանգարանային դիտի լինի»

«Թյուրքիյե» թրուկնու ազգայնական թերթի սյունակագիր Մուսաֆա Նեջաթի Օգֆաքուրան, որ հաճախ է հանդես գալիս հակահայ խորհրդածություններով, նույն թերթի մայիսի 1-ի համարում մի նոր հոդված է տդագրել, միեւնույն ոգով, սդառնալիքներ տեղալով հայերի գլխին: «Թուրք եւ իսլամ աշխարհն այս դահին, գրում է նա, ամենաոժվարին շրջաններից մեկն են ապրում, քանի որ աշխարհի բոլոր կողմերում քրիստոնյա եւ սիոնիստ հրեաները մահմեդականների արյունն են հոսեցնում գեսի նման»: Արեւմուտքի դեմ դատադարական խոսքերից հետո հոդվածագիրն անցնում է իր նախասիրած թեմային հայկական հարցին, եւ գրում. «Հույները, որոնք անցյալում մինչեւ Փոքրասիա էին հասել, հետագայում խույս տվեցին մինչեւ Էգեյան ծով: Ադրբեջանն էլ, մյուս երկրների հետ, իր ուժերը հավաքելով դիտի վերականգնվի: Հայերը, որոնք Արեւմուտքի ձեռքում խաղաթուղթ, 1853 թ.-ի վեր, եթե դավաճանած չլինեին օսմանցուն եւ Թուրքիային. Անատոլիայի եւ Ստամբուլի մեջ իրենց թվաքանակը բարձրացրած կլինեին 4 միլիոնի, ինչպես հույները, որոնք եթե 1820 թ. սկսյալ չդավաճանեին, մոտավորապես 7000 կլինեին Ստամբուլում: Մինչդեռ հիմա հայերի թիվը 40 հազար է ընդամենը, իսկ հույներինը հազիվ 4 հազար:

Այնուհետեւ, չանդրադառնալով, որ փաստորեն խոստովանություն է կատարում, Թալեաթի ուղիղ հետնորդ Օգֆաքուրան ճամարտակում է. «Անցյալում մեր տառադանքները նրանց ոչնչացման դատճառը դարձան, մեր էլ օգտին ծառայեցին: Եւ աղագայում, ինչպես Կովկասում, Հայաստանն էլ ներառյալ, հայերի թվաքանակը, ինչպես այսօր Անատոլիայում, բանգարանային թիվ դիտի լինի: Հայերը նույնիսկ եթե գրավեն Ադրբեջանը, դա իրենց վախճանը դիտի լինի: Հայաստանը, որ իր փոքր անգամ չի կարողանում կուշտ դահել, Մեծ Հայաստանի երազի ետեւից վազվզելով իրեն դեղի ադեռ է ադաջնորդելու»:

Այնուհետեւ հոդվածագիրը մեղադրում է Թուրքիային Ադրբեջանի նկատմամբ ուշադիր չլինելու մեջ. Արեւմուտքն եւ հատկապես Ֆրանսիային դեղի Հայաստան «միայն վերջին 2 ամիսների ընթացքում 300 տոննա զենք ուղարկելու», եւ ասուններին իրենց բանակում ադրբեջանցի զինվորների ձեռք զենք չտալու եւ նրանց որդես կատարելի կամ բրինձ մարդ օգտագործած լինելու համար: «Ազգ»

digitised by A.R.A.R.@

Քննադատություն

# ԱՆԱՎԱՐՏ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ է

Ահեղնացող արտագաղթի բափը, համոզված եմ, կարող է կասեցվել միայն ու միայն կենսաապահովման նվազագույն պահանջները բավարարելու ոլեսական ճիգերին զուգընթաց. միայն դա կարող է ամրապնդել մեր համոզմունքը, որ այս հողում ապրելու մեր կոչումը, մեր կիսավեր տունը կառուցելու պարտականությունն ունի ոլեսական աջակցություն: Այն երաշխիքներ կստեղծի ոլեսության կողմից ինակչությանը հուզող հարցերին հիմնարար մոտեցում ցուցաբերելու ու պատասխանատվության վերաբերյալ, բնակչության շրջանառու միջոցների ներդրման համար շահավետ դաշտ կստեղծի, կկասեցնի դժվարությամբ հաղթահարելի դարձած «փայտյա» ռուբլիների արտահոսքը ԱՊՀ երկրներ: Առայժմ ոչ մի բան չի արվում, անորոշ ու անմխիթար վիճակում է բնակարանային շինարարությունը, տասնյակ տարիներով բնակարանային հերթի են սպասում բազմաթիվ ընտանիքներ:

Պետությունը գուցե կարելի է բացատրել շինարարական համակարգում կատարվող ներդրումների մեծածավալությամբ եւ այդ համակարգում դրամաշրջանառության երկարաժամկետությամբ, շինանյութի բացակայությամբ կամ թերեւս բազմահազար անավարտ շինարարական օբյեկտների առկայության փաստի առջեւ ընկրկելու իրողությամբ: Այս դեպքում անիմաստ է նաեւ հույս դնել մարդասիրական օգնության կամ օտարերկրյա ներդրումների վրա: Այս ծանր խնդիրը մերն է, մենք էլ ոլեսք է լուծենք այն:

Այսօր 4700 (1.03.92 թ. փոխանակագրի հրապարակած տվյալներով) կամ 6000-ից 8000 (29.01.93 թ. Էկոնոմիկայի նախարարության տվյալներով) անավարտ շինարարական օբյեկտները դասաղարսված են փոշանալու ու քայքայվելու: Եթե ոլեսական տվյալներն անորոշ են անավարտ շինարարությունների քանակի տեսակետից, արդեն դրանք շատ ավելի հստակ են անավարտ բնակելի շենքերի կառուցման ավարտի հետ հույսեր փայփայող հարյուր քառասունմեկ հազար ընտանիքների վերաբերյալ, որոնցից 46 հազարը մայրաքաղաքում, մնացածը հիմնականում աղետի գոտում: Սարսափազդու չափերի է հասնում շինհրապարակներում անտերության մատնված մեր ներդրումների չափն այսօրվա գներով արտահայտված: Ստորեւ բերված աղյուսակում փորձ է արվել 1.01.92 թ. դրությամբ շինարարության նախարարության համակարգում Երեւանի 190 անավարտ կառույցների տվյալներով գնահատել մեկ օբյեկտի միջին ցուցանիշները (նրա վրա կատարված եւ կատարվելիք ներդրումների չափը) եւ այն ընդհանրացնել տարբեր ատյաններում հրապարակված օբյեկտների նվազագույն (4700) քանակի վրա կատարված եւ անհրաժեշտ ներդրումների ծավալները գնահատելու համար: Աղյուսակում բերված նախահաշվարկային տվյալները համադրասխանում են 1984 թ. սահմանված գներին, իսկ 1993 թ. տվյալներն մեծացվել են 80 անգամ, որը համադրասխանում է շինարարական համակարգում գների փոփոխության նվազագույն մակարդակին:

| Անավարտ շին. օբյեկտների գտնվելու վայրը | | քանակը | նախ. հաշվ. արժեքը մլն ռ. | կատարված է մլն ռ. | կատարված է 1993 թ. մլրդ ռ. | ավարտի համար պետք է մլն ռ. | ավարտի համար պետք է 1993 թ մլրդ ռ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| Երեւան | ընդամենը | 190 | 654 | 168 | 13,5 | 486 | 38,8 |
| | բնակելի | 90 | 205 | 18,8 | 1,5 | 186,3 | 14,9 |
| Մե՛ջ օբյեկտի միջին արժ. | | 1 | 3,41 | 0,88 | 0,07 | 2,53 | 0,2 |
| Հանրապետ. ընդ. | | 4700 | 16172 | 4158 | 333 | 12014 | 961 |
| Բնակելի | | 2260 | 7707 | 1989 | 159 | 5718 | 457 |

Բերված տվյալներից հետեւում է, որ հանրապետությունում եղած անավարտ շինարարության օբյեկտները անհրաժեշտ նվազագույն ծախսերով ավարտուն դարձնելու համար անհրաժեշտ են մեկ տրիլիոնի չափ ներդրումներ, որի կեսն անհրաժեշտ է անավարտ բնակելի շինարարական օբյեկտների համար: 1993 թ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի հունվարյան նախագծում հանրապետության շինարարական համակարգի համար նախատեսված չափերից ելնելով միայն ոլեսական միջոցներով շինարարությունը ոչ միայն ներկա հազարամյակում ավարտելն է անհնար, այլ անհրաժեշտ է ես երկու-երեք հարյուր տարի: Եթե ասածիս ավելացնենք ոչ ոլեսական կառույցներում մնացած անավարտ շինարարությունները, սահմանամերձ շրջանների ավերված կամ լքված բնակավայրերի վերականգնման ծախսերը, ինչպես նաեւ զրադում հողի սեփականաշնորհման արդյունքում կոլեկտիվ կամ ոլեսական տնտեսությունների տիրազուրկ մնացած հիմնական միջոցների գործարկման ծախսերը, ամբողջական կլինի ոլեսական համակարգի վրա ծանրացած այն հիմնական բեռը, որը բոթափելու համար կոչահանջվի տասնյակ տարիների հրանաջան աշխատանք ու հարյուրավոր միլիարդների ներդրումներ: Այս դաժան իրողությունը, եթե «թթոնումով» կարող է ընդունվել հիշ թե շատ բնակարաններով առչահովվածների կողմից, ապա սարսափելի ու անընդունելի ոլեսք է լինի բնակարանների հերթերում սպասող 141 հազար մեր հայրենակիցների ընտանիքների համար, որոնց նախորդ ոլեսական համակարգում թերվճարվածության հաշվին ստեղծվել են մեր այսօրվա համեմատաբար բարվոք բնակարանային ոլայմանները:

Մինչ բնակարանների սպասողները եւ մենք անավարտ, անտերության մատնված շինարարությունների փոշիացման վկաներս կարծես թե հարմարվել ենք այն մտքի հետ, որ այլեւս բնակարանների անվճար հատկացում չի սպասվում, մեր հավակական իրավունքներն ու պարտականությունները կրող ոլեսական կամ հաղթային ատյանները չեն էլ մտածում որոշակի տեղեկացնել, որ մոտ ապագայում բնակարանների բաշխում չի սպասվում եւ ոլեսք է մտածել նրանց ձեռք բերման մասին: Ավելին, նրանք անհոգ ոչ ինքնագիտակ կատարում են չկառուցված, գուցե եւ վերջնականապես չնախագծված շենքերում բնակարաններ ստանալու իրավունք բաշխելով, որն ավելի է դժվարացնում փակուղուց դուրս գալու հնարավորությունները:

Այս պայմաններում հրամայական է դառնում միավորել ինչպես առանձին անհատների, այնպես էլ հիմնարկ-ձեռնարկությունների ու պետության ներդրումները.

1. Ազատ շուկայական հարաբերությունների անցնելուն զուգընթաց հրաժարվել հին ավանդական պետական կառույցներից ու հարաբերություններից (բնակարանների բաշխման ծառայություններ, կոմերցիոն շինարարություն եւ այլն), ձեւավորել ու ստեղծել այլընտրանքային ժողովրդավարական հիմունքներով գործող ոչ պետական կառույցներ, որոնք իրավահավասար ու հաղթակիր գործընկերության հիմունքներով գործելով կարող են միավորել իրենց միջոցները ու ներդնել անավարտ բնակարանային շինարարության օբյեկտների ավարտն առչահովելու եւ ստացած արդյունքին իրենց ներդրումներին համարժեք տնօրինելու:

Այդ հիմունքով ստեղծված բաց բաժնետիրական ընկերությունների բաժնետերերը կարող են լինել կառավարությունը եւ հաղթապետարանը, հիմնարկ-ձեռնարկությունները, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կամ չունեցող կազմակերպությունները, անհատ հաղթաքաղաքացիներ, ներքին ու արտաքին սփյուռքի մեր հայրենակիցներ, որոնք շահագրգռված են մեր կիսավեր տներ կառուցելու գործում կամ ուղղակի շահույթ ստանալու ակնկալիքներ ունեն: Բաժնետերերի ներդրումները կարող են լինել հենց անավարտ շինարարությունը, դրամական միջոցները, արտերկրյա տարադրամը, շինանյութը, հիմնական միջոցները, ծառայությունները եւ վերջապես մասնակցությունն անմիջական աշխատանքներին:

2. Աղյուսակում բերված 159 միլիարդ ռ. համադրասխան առկա անավարտ շինարարությունն ամբողջությամբ համարել հերթերում բնակարանների սպասող սոցիալապես անապահով ընտանիքների սեփականությունը եւ անհատույց նրանց տրամադրել շինարարության ավարտից հետո:

3. 457 միլիարդի համադրասխանող անավարտ մասի կառուցումը կարող է իրականացվել միայն բաժնետիրական հիմունքներով ներդրումներ կատարելով: Հերթագրվածների համար ոլեսությունը կարող է վարկ տալ, որպեսզի նրանք ներդրումներ կատարեն, կամ էլ ոլեսությունը կարող է բաժնետիրական ընկերություններին միջոցներ տրամադրել, փոխարենը պատասխի բնակարաններ ստանալու պայմանով:

Վերը բերվածն առչահովելու համար անհրաժեշտ է.

1. Շինարարական համակարգում «արտակարգ դրության» իրավիճակ, որով հանրապետությունում արգելվում են բոլոր տեսակի նոր շինարարությունները, հատկապես անօրինական շինարարությունները, հատկապես անօրինական շինարարությունը:

2. Պետության ինվեստիցիոն քաղաքականության համակարգում վարկային հատկացումներ նախատեսել բաժնետիրական ընկերությունների գործունեությանն աջակցելու, հատկապես նրանց մենաշնորհն առչահովելու համար:

3. Ստեղծել որոշակի իրավական պայմաններ անավարտ շինօբյեկտներ ձեռք բերելու, նրանց վրա կառուցված պատասխի բնակարանները տնօրինելու, նրանց հետագա բաշխման կամ իրացման համար, առանց տեղական խորհուրդների կամ այլ պատասխանական ատյանների ավելորդ ու անհարկի միջամտության ու խոչընդոտների:

4. Վերացնել ու մեղմացնել անձնագրային ռեժիմի դրսեւորումները եւ թույլատրել անարգել բնակարան ձեռք բերել ՀՀ ցանկացած քաղաքացու, փախստականի եւ սփյուռքի մեր հայրենակիցներին, եթե նրանք ներդրումներ են կատարում անավարտ շինարարությունների ավարտի համար:

5. Պետական ձեռնարկություններին հնարավորություն լինձեռնել իրենց չօգտագործվող արտադրական, կոլտնտ-կենցաղային կամ վարչական տարածքները փոխանակելու աշխատողների համար կառուցվելիք բնակելի տարածքների հետ:

Շուկայական հարաբերություններին անցնելու պայմաններում առանձնապես կարեւորվում են շահագրգիռ կողմերի ակնկալիքները, որոնք լիովին արդարացվում են հետեւյալ կերպ:

Պետությունը հնարավորություն է ստանում կասեցնել ժողովրդի սեփականության անավարտ շինարարությունների քայքայումից սպասվող հարյուրավոր միլիարդների հասնող վնասը: Կառուցման արդյունքում ոչ միայն հոգալ ժողովրդի սոցիալ-տնտեսական կարեւոր խնդիրներ, այլեւ դրանց իրացումից ստանալ, ինչպես նաեւ հավելյալ օգուտներ բաժնետիրական ընկերությունների մուծած հարկերից:

Բաժնետերերը ստանում են բնակարան ձեռք բերելու գերադասելի իրավունք ու իրենց տարեկան շահութաբաժինը:

Անավարտ շինարարության խնդիրը բոլորինս է, եւ բոլորս ենք պարտավոր մեր մասնակցությունն առչահովել համազգային նշանակության այդ խնդրի լուծմանը:

ՌՈՒԱՆՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
«Սասար» բաժնետիրական ընկերության նախագահ

Տնտեսություն

# Անհրաժեշտ մակաբույծ

Հայտնի է, որ հնդկացորենը (գրեչկա) արժեքավոր ծավարային եւ մեղրատու բույս է: Շնորհիվ դիետիկ եւ բարձր համային որակի հնդկացորենի ծավարը (սեւածավարը) օգտագործվում է մանկական սնունդ պատրաստելու համար, հիվանդների, ինչպես նաեւ լեռնագործների եւ մեծադածուլող բանվորների ճաշացուցակում:

Հնդկացորենի բարձր սննդարարությունը գլխավորապես պայմանավորված է նրա սպիտակուցային համալիրի կազմով: Իր ֆիզիոլոգիական արժողությամբ այն մոտ է ձվի եւ կովի կաթի սպիտակուցներին: Հնդկացորենի օսլան դյուրամարս է: Բացի այդ, սեւածավարը պարունակում է օրգանական թթուներ, հանքային նյութեր, B խմբի P, PP եւ այլ վիտամիններ: Նրա դիետիկ հատկությունները պայմանավորված են արյունաստեղծման հատկությամբ, նյարդային համակարգի եւ աղեստամոքսային տրակտի վրա բարերար ազդեցությամբ: Վերջերս նաեւ հայտնի է դարձել հնդկացորենի բացառիկ կարեւոր հատկության մասին՝ այն օրգանիզմից հեռացնում է ռադիոակտիվ տարրերը եւ այլ վնասակար միացություններ:

Հնդկացորենի ալյուրը նրա ճարպերի արժեքավոր հատկությունների շնորհիվ կարելի է պահպանել երկար ժամանակ:

Հնդկացորենի տերեւներից ստանում են օուտին (P վիտամին), որը բժշկության մեջ օգտագործվում է սկլերոզի եւ հիպերտոնիայի դեմ: Հնդկացորենի մեղրը օժտված է բուժիչ հատկություններով:

Զարմանալի չէ՞ արդյոք այն փաստը, որ նման հրաշալի եւ շուկայում թանկ գներով վաճառվող մշակաբույսը հանրապետությունում չի աճեցվում: Պատճառները շատ են:

Առաջին, ավանդականորեն այն չի մշակվել Հայաստանում: Երկրորդ, նախկին իշխանությունների վարած գնային քաղաքականությունը մշակաբույսի աճեցումը ավանդական շրջաններում (Ռուսաստանում, Ուկրաինայում, Ղազախստանում, Մոլդովայում եւ այլն) դարձրել էր անշահավետ, որ մնաց որ ընդլայնեին աճեցման արեալը: Երրորդ, մշակաբույսը ունի սելեկցիոն թերություն ցողունն անընդհատ աճում է ճյուղավորվում է, ինչի պատճառով սերմերը միաժամանակ չեն հասունանում:

Աշխատանքներ են տարվում հատկապես վերջին դժվարությունը հաղթահարելու համար, մասնավորապես Ռուսաստանի սելեկցիոն կենտրոններում ստեղծվել են գրադիմացկուն, երաշտադիմացկուն, պառկման նկատմամբ կայուն, միաժամանակ հասունացող եւ խոշոր հատիկներով բարձր բերքատու սորտեր:

Եւ պատահական չէր, որ 1989 թվականին հնդկացորենի մշակության վերաբերյալ IV Համաշխարհային սիմոզիումը տեղի էր ունեցել Օրյոլ քաղաքում, որ ներկա գտնվող Հնդկաստանի, Չինաստանի, Ճապոնիայի, Կորեայի, Վիետնամի, Լեհաստանի եւ այլ երկրների գիտնականները գնահատելով ռուս սելեկցիոներների կատարած աշխատանքները, համագործակցելու ցանկություն էին հայտնել:

Ասվածն, իհարկե, չի կարող հիմք հանդիսանալ ստեղծված սորտերը հանրապետությունում աճեցնելու համար: Յուրաքանչյուր ագրոկլիմայական գոտում տարբեր սորտերի հնարավորությունները լիովին դրսեւորելու համար անհրաժեշտ է իմանալ բույսի ֆիզիոլոգիական կարողությունները, մշակել տվյալ տեղում աճեցնելու առանձնահատուկ տեխնոլոգիա:

Շնորհիվ ածի պայմանների նկատմամբ մեծ հարմարողականության եւ տարածման հանձնարարական լայն արեալի, հնդկացորենը դիտարկվում է եւ որպես հիմնական ցանքի, եւ որպես միջանկյալ խոզանացան մշակաբույս: Քանի որ հնդկացորենը խոնավասեր, ջերմասեր մշակաբույս է (շատ զգայուն է ջերմության անկման նկատմամբ, գարահարումները կործանարար են զարգացման բոլոր փուլերում) եւ վեգետացիոն շրջանը մոտ 2-2.5 ամիս է, այն հաջողությամբ կարելի է մշակել նախալեռնային գոտում, նույնիսկ ոչ ավելի բարձր տեղանքում: Հնդկացորենով կարելի է «փրկել վիճակը», երբ ինչ-ինչ պատճառներով վնասվել են աշնանացան կամ վաղ գարնանացան մշակաբույսերի ցանքերը:

Ցածրադիր գոտում այն կարելի է մշակել վաղահաս մշակաբույսերից եւ միամյա խոտաբույսերից հետո, ինչպես նաեւ ավելի ուշ ժամկետներում, բայց միայն ոռոգվող հողերի վրա: Անջրդի պայմաններում այն հաճախ 2-3 տարեւ հանելուց հետո չորանում է: Ջրի պահանջը հատկապես զգալի է զարգացման շրջանում, հետագայում դրսեւորվում է նրա երաշտադիմացկունությունը: Չորության պայմաններում արագանում է բույսերի հասունացումը, սակայն նվազում է բերքը: Բավարար խոնավության առկայությունը, անձրեւային եղանակները նպաստում են բարձր բերքի ձեւավորմանը:

Դաղախստանում եւ Բելառուսում միջին բերքատվությունը կազմել է 6-7.5 ցենտներ հեկտարից, Ռուսաստանում, Ուկրաինայում, Մոլդովայում նոր սորտերի շնորհիվ ստանում են 15-25 գ/հ, առանձին տեղերում բերքատվությունը հասնում է 30-32 գ/հ: Ուկրաինայում բարձր բերք ստանալու համար հնդկացորենի հետ ցանում են հոտավետ բույսեր, մասնավորապես խրծածաղիկ (Ֆացելիա) մեղուներին եւ այլ միջատներին գրավելու համար:

Մոլդովայում լայնորեն կիրառվում է հնդկացորենի մշակումը պտղատու այգիների շրջակայքում: Հրապուրելով օգտակար միջատներին, հնդկացորենի դաշտերը նպաստում են այգիների վնասատու միջատների դեմ բնական պայքարի ծեւավորմանը: Դրա շնորհիվ վերականգնվում է մարդու կողմից (քիմիկատների օգտագործման պատճառով) խախտված բնական հավասարակշռությունը, բարելավվում է գյուղատնտեսական միջավայրի էկոլոգիական վիճակը:

Հնդկացորենի համար լավագույն հողեր են հանդիսանում բավարար չափով ջերմացող, փխրուն լավախոզները եւ ավազակավերը: Մշակաբույսն աճում է թթվային հողերի վրա, սակայն նախընտրում է չեզոք միջավայրը: Առավել բարենպաստ նախորդներ են հանդիսանում ցորենը, տարեկանը, սիլոսի համար հավաքված եգիպտացորենը, հատիկաընդեղենային մշակաբույսերը, հերկված բազմամյա խոտերը եւ այլն:

Հուսանք, որ հոդվածը կնպաստի այս եկամտաբեր, օգտակար մշակաբույսի ներմուծմանը եւ մշակությանը:

Միայն հիշեցնում ենք, բարձր եւ որակյալ բերք ստանալու համար անհրաժեշտ է ընտրել համադրասխան լավագույն սորտ եւ խստորեն կատարել պահանջվող տեխնոլոգիական միջոցառումները:

Գիտցեք, որ 1 կիլոգրամ սերմացուին եթե գումարենք ձեր աշխատանքը, կտանք 25-35 եւ նույնիսկ ավելի կիլոգրամ համեղ կարմրավուն հատիկներ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ
ՀՀ Գիտատեխնիկական ինֆորմացիայի ինստիտուտի ավագ գիտաշխատող

digitised by A.R.A.R.@

Իրավական

# ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է

Չինվորական ոստիկանության հերթապահի մասում ստացված ահազանգը տագնապալի էր: Հայտնվում էր, թե նորոգման գումարտակի դահեստային հարկաբաժնից գողացել են ավտոմոբիլի ակումուլյատորներ: Դեղձի վայր մեկնեց օպերատիվ ճնշական խումբ, որն անհապաղ ձեռնամուխ եղավ հանցագործության հետաքննությանը: Հաջողվեց դարզել, որ գողերը դահեստ են բափանցել կողդեմները սղոցելով եւ աննկատ հեռացել են ավտոմեքենայով: Ոստիկանության աշխատակիցներն արագորեն գտան հանցագործների հետքը: Դրանք Լին գորամասի հրամանատարի ավտովարորդ Ա. Մուրադյանը եւ դրադարձիկ Վ. Ավետիսյանը: Երկուսն էլ դատված են եղել: Գողերը լիովին առգրավվել է:

Ահա մեկ ուրիշ գրառում հերթապահի մասի իրավախախտումների եւ հանցագործությունների հաշվառման ու գրանցման մատյանից: Զորամասերից մեկի զինվոր Ս. Սիգորյանը ավտորություն էր դարձրել ծաղրուծանակի ենթարկել իր համագնդեցիներից մեկին: Բանը հասել էր ծեծկռտուքի: Գրիգորյանը հրեական դատախանատվության է կանչվել եւ դատվել հանցավոր վարքագծի համար:

Չինվորական ոստիկանության հաշվին գրանցված են գողությունների, դեպական ունեցվածքի հափշտակումների, կաբառակերության, խուլիգանության փաստերի բացահայտումներ, առօրինաբար դահվող հրազենի ու զինամթերքի առգրավումներ եւ ուրիշ իրավախախտումների ու հանցագործությունների բացահայտումներ: Եւ դրանցից յուրաքանչյուրի հետեւում անհուն գիշերներ են, ծանր առօրյա, որը հաճախ կապված է վտանգի հետ:

Այդ ծառայությունը մեր ազգային բանակից հիշ ավելի երիտասարդ է: Այն ստեղծվեց անցյալ տարվա օգոստոսին դաշտանության նախարարության ջանքերով, որը կենտրոնորեն շահագրգռված է իր հովանու ներքո իրավադահության մարմնի գոյությամբ: Նախկին Միությունում նմանակներ չեն եղել, ուստի եւ զինվորական ոստիկանության կառուցվածքն ու մեխանիզմը հարկ եղավ ինքնուրույնաբար մշակել: Նոյեմբերի վերջերին այդ ծառայությունն սկսեց գլխավորել գնդապետ ՍԵՐԳԵՅ ԱՇՈՒՐԲԵԿՅԱՆԸ:

– Մեր հոգսերը շատ են, դաստում է նա: Մենք ոչ միայն դայքարում ենք բանակում բացասական երեւույթների դեմ, այլեւ ամեն օր աշխատում ենք երիտասարդ զինվորների գիտակցականության, կարգադահության բարձրացման, նրանց մեջ զինվորական դարտքի նվիրվածության, ազնվության դաստիարակման նդատակով: Չէ որ եթե ստեղծում ենք մեր բանակը, որը դատրաստ է դաշտպանել հանրադետության անկախությունը, առդա այն դետք է լինի ոչ միայն մարտունակ, այլեւ ժողովրդավարության եւ մարդասիրության ոգով տոգորված: Եւ մեր նդատակն է ոչ թե դաստել, այլ կանխել հանցագործությունները:

**– Սա անկասկած, ճիշտ դուրբ է: Ձեր միտքն ամրագնդեմ խնդրեմ, կոնկրետ օրինակով:**

– Հաճույքով: Հայտնի է, որ բոլոր երիտասարդները չէ, որ միատեսակ են դատրաստված զինվորական ծառայության: Ոմանք չեն դիմանում կանոնադրական դահանջներին եւ ինքնագլուխ լքում են զորամասերը: Մեզ հաջողվել է ծնողների, հարազատների հետ հանդիդումների, նրանց հետ երկարատեւ զրույցների շնորհիվ ծառայության վայր վերադարձնել 100-ից ավելի երիտասարդ զինվորների. բայց այդ դեդքում մենք մանրակրկիտ ընտրություն ենք կատարում: Եթե գործ ունենք չարամիտ դասալիքների հետ, առդա նրանց նկատմամբ կիրառվում են քրեական կամ վարչական ներգործության միջոցներ:

**– Ինչդե՞ս եք գործակցում մյուս իրավադահ մարմինների հետ:**

– Մենք սերտ կադեր ունենք ներքին գործերի նախարարության մարմինների, դատախազության, ազգային անվտանգության վարչության հետ: Ծրագրում ենք համատեղ միջոցառումներ, հատկադես մասնավոր անձանց մոտ առօրինաբար դահվող զենքի առգրավման նդատակով: Իսկ եթե հանցագործությունը կատարում են մի խումբ զինվորական եւ քաղաքացիական անձիք, առդա այստեղ փոխգործողությունն արդեն դարտադիր է: Տնական օրերին մյուս իրավադահ մարմինների հետ համատեղ կմասնակցենք հասարակական կարգուկանոնի դահդանմանը:

**– Երբեմն վիճակվում է տեսնել կիսագինվորական համազգեստ հագած երիտասարդների: Եւ հաճախ դժվար է դարզել, թե ովքեր են նրանք, զինվորական, թե քաղաքացիական անձիք:**

– Այո, ցավոք, նման անձիք քայլում են ոչ միայն Երեւանի, այլեւ հանրադետության մյուս քաղաքների փողոցներում: Մասնավորադես մայրաքաղաքում նրանց բացահայտմամբ զբաղվում է զինվորական դարեսությունը: Իսկ եթե ստուգման ժամանակ նրանց մոտ հայտնաբերվում են աղօրինի գենք, բմբուլներ, ապա գործին մասնակից է դառնում զինվորական ոստիկանությունը:

**– Ձեզ մոտ դետք է ծառայեն մասնագիտորեն դատրաստված, առողջ, խիզախ մարդիկ, ինչդես հայտնի է, նրանք երկնքից չեն ընկնում: Ինչդե՞ս եք դատրաստում բարձրակարգ դրոֆեսիոնալներ:**

– Երբ նույնիսկ երիտասարդը համադատասխանում է այս բոլոր դահանջներին, նա դետք է մշադես բարձրացնի իր մակարդակը: Ուստի մեզ մոտ ստեղծված է ուսումնական կենտրոն: Դա մի ամբողջ համալիր է, որը բույլ է տալիս կանոնավորադես զբաղվել իրավական, մասնագիտական, շարային եւ ֆիզիկական դատրաստությամբ: Երիտասարդների հետ աշխատում են տարբեր բեռումով որակյալ դասատուներ: Շուտով մենք կբացենք նաեւ բժշկական կաբինետներով հանդերձավորված առողջարարական համալիր:

Մեզ մոտ իսկական զինվորական դատրաստություն են անցնում զորակոչային տարիքի դատանեներ, որոնցից շատերն անկասկած խրենց բախտը կկադեն զինվորական ոստիկանության հետ, կմնան այստեղ աշխատելու: Սա մեր ոեզերվն է, մեր աղագան:

ՍՏԵՓԱՆ ՂԱՐԻԲՅԱՆ
Սնարք

Զրազիտություն

# Ն. Նազարբաեւ. Հարկավոր են համաձայնեցված միջոցառումներ

Կազաստանի գործակալությունը հաղորդում է. Ղազախստանի նախագահ Ն. Նազարբաեւը հանրադետության զինված ուժերի ստեղծման մայիսի 7-ին լրացող առաջին տարեդարձի նախօրեին ելույթ ունեցել մոտավարձգային դիվիզիաներից մեկի անձնակազմի առջեւ: Նա մասնավորադես հայտարարել է. «Հանրադետությունը մինչեւ վերջին դահը դաշտդանում էր Հանրակցության միասնական, իսկ հետագայում միացյալ զինված ուժերի գաղափարը: Եւ դատահական չէ, որ նա նախկին ԽՍՀՄ հանրադետությունների մեջ վերջիններից մեկն էր, որ սկսեց ստեղծել սեփական բանակ: Ղազախստանի դեկավարությունն այսօր էլ հաստատ համոզված է, որ յուրաքանչյուր իսկական դետության անվտանգությունն առավել հուսալիորեն կադահովվի ԱԴՀ երկրների կոլեկտիվ դաշտդանության դեդքում:

Ինքնուրույն դաշտդանական քաղաքությունն անչափ բարդ գործընթաց է, որը դահանջում է հաշվի առնել բազմաբնակադես ամեն ինչ: Բայց այստեղ կա նաեւ այնդիսի կարեւոր կողմ, ինչդիսին է աշխարհաքաղաքականը: Եվրասիայում Ղազախստանը զբաղեցնում է առանձնահատուկ, ճոկու աշխարհամասերը «կադող» դիրք: Եւ այս դայմաններում ռազմական բնագավառում հարկավոր է բաղաքական բայլերի ու վճիռների մեծ կշռադատվածություն, որոնք բնավ չդետք է խախտեն տեղաբաշխումն ստեղծված կայունությունը:

Հանրակցության երկրները շատ բան են ակնկալում արտաստահմանի տնտեսական աջակցությունից. ԱԴՀ-ում վիճահարույց իրավիճակների կարգավորման հարցում ՄԱԿ-ի եւ ԵԱՀԽ-ի խաղաղարար ջանքերից: Իհարկե, ուրիշի օգնությունից կարելի է օգտվել եւ դրանից չհրաժարվել, բայց կարեւոր է ինքնուրույնաբար համաձայնեցված միջոցներ ձեռնարկել ԱԴՀ տնտեսական իրավիճակը բարելավելու եւ նախկին ԽՍՀՄ տարբեր շրջաններում հակամարտությունները կարգավորելու համար:

Ղազախստանն այս ուղղությամբ արդեն հանդես է եկել նախաձեռնություններով. մասնավորադես խոսքը Ալմա Աթայում ՄԱԿ-ի հովանու ներքո կանխիչ դիվանագիտության կենտրոն ստեղծելու. Ասիայում փոխգործողության եւ վստահության միջոցներին նվիրված խորհրդակցություն անցկացնելու առաջարկության մասին է: Այդ խորհրդակցության խնդիրը դետք է դառնա խաղաղության ամրադնդման մեխանիզմի ստեղծումը Հանրակցության ոչ միայն ասիական, այլեւ մյուս շրջաններում: Այս նդատակով անչափ օգտակար կլիներ ԱԴՀ երկրների փոխհարաբերություններում մշտադես խորհրդակցություններ անցկացնել համադատասխան նախարարությունների, գերատեսչությունների, հասարակական կազմակերդությունների ու շարժումների գծով. դրդես տարբնույթ վեճերի ու հակամարտությունների կարգավորման համադիտանի միջոց:

Հանրակցության ինչդես կոլեկտիվ, այնդես էլ անհատական դաշտդանությունն առդահովող անվտանգության արդյունավետ համակարգը դահդանելու համար մասնավորադես կարեւոր են ռազմական հարցերի շուրջը ԱԴՀ շրջանակներում ընդունված համաձայնությունների կատարումը, հանրակցության երկրների ընդհանուր ռազմավարական միջուկային ուժերի եւ օդաֆիզերական դաշտդանության վրա հենվող ռազմավարական համակեցության դահդանումը, զինվորական կադրերի դատրաստման միասնական համակարգի եւ համաձայնեցված ու փոխշահավետ դայմաններով զորքերի համալրման միասնական սկզբունքների իրագործումը»:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ

# Ֆ. Վրանիցկու Ղազախստան կատարած այցի առթիվ

Ավստրիայի Հանրադետության Ֆեդերալ կանցլեր Ֆրանց Վրանիցկու Ղազախստան կատարած դաշտնական այցի ժամանակ բանակցությունների բնթացքում ձեռք բերվեցին համաձայնություններ, որոնք վերաբերում են երկու երկրների տնտեսական հարաբերությունների ընդլայնմանն ու խորացմանը:

Այմա Աթայից ստացված հաղորդման համաձայն, Ղազախստանի Հանրադետության նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը նշել է, որ Ղազախստանում Ավստրիայի հետ առեւտրատնտեսական հարաբերություններին առանձնահատուկ կարեւորություն է տրվում: Այսօրվա դրությամբ, հայտնեց նա, համաձայնեցված է տնտեսական համագործակցության 40-ից ավելի նախագիծ 2 միլիարդ դոլար ընդհանուր գումարով: Դրանցից արդեն ստորագրվել է 25 միլիոն դոլարի նախագիծ: Ակնկալվում է, որ երկու երկրների առդրանքաշրջանառությունը 1993 թ. կկազմի ավելի քան 15 միլիոն դոլար:

Ղազախստանի եւ Ավստրիայի գործարար շրջանների բանակցությունների կարեւոր արդյունքներից մեկը դարձավ Կարագանդայի մետալուրգիական կոմբինատի արդիականացման համաձայնագրի ստորագրումը: Արդիականացումն իրագործվելու է ավստրիական «Ֆեստ ալդինե» ֆիրմայի օժանդակությամբ, որը սարքավորումներ կմատակարարի դողդոջի անընդմեջ ձուլման հոսքագծի համար եւ վերջինիս հիման վրա ավտոմոբիլային գլոցարանների դատրաստման համար: Նախագծի ընդհանուր արժեքը կազմում է ավելի քան 500 միլիոն դոլար: Դրա ֆինանսավորման համար կօգտագործվեն ավստրիական երաշխիքային հոսքագծեր, որոնց առնչությամբ անցյալ տարի հաշվաձայնություն էր ձեռք բերվել Նուրսուլթան Նազարբաեւի Վիեննա կատարած այցի ժամանակ:

Նախնական համաձայնություն ձեռք բերվեց Ավստրիայի ԱԲՎ շինարարական ֆիրմայի օգնությամբ, Մոսկվայի հնգաստղանի «Մարկո Պոլո օթելի» նմանությամբ Այմա Աթայում հյուրանոց կառուցելու շուրջը: Ենթադրյալ շինարարության վայրում հանդիսավորադես դրվեց առաջին քարը:

Ավստրիայի դաստվիրակությունը դազախական կողմի հետ համատեղ ճնարկեց Այմա Աթան Վիեննային կադող նոր ավիուղղի բացման հարցը: Մոտ ժամանակներս համաձայնագիր կստորագրվի երկու երկրների միջեւ կանոնավոր ավիափոխադրումների կատարման շուրջը:

Առեւտրատնտեսական համագործակցության գործողությունների համաձայնեցման նդատակով կողմերը դայմանավորվեցին դազախա-ավստրիական տնտեսական հանձնախումբ ստեղծելու մասին: Նշվեց երկու կողմերի օգտի շահագրգռությունը Ղազախստանում համատեղ ձեռնարկությունների ստեղծմամբ, որտեղ ներկայումս արդեն գործում է 20-ից ավելի համատեղ դազախա-ավստրիական ձեռնարկություն: Գրանցված է նաեւ 5 ձեռնարկություն ավստրիական կադիտալի 100 տոկոսանոց մասնակցությամբ:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ

«Հանդդդային»

# Առաջին անգամ հայրենիքում

65 տարի առաջ տարադրության մեջ, հեռավոր Կահիրեում ստեղծված «Համազգային» հայ կրթական եւ մշակութային միությունը երեկ առաջին անգամ հայրենիքում նշեց իր ծննդյան տարեդարձը: Դժվար է, իհարկե, գերագնահատել այս կազմակերդության դերը հայ սերունդների կրթության եւ հայեցի դաստիարակության, ընդհանրադես ազգայադահդանության գործում: Միայն Լեւոն Շանթի, Նիկոլ Աղբալյանի եւ մյուս հայ մտավորականների անունների հիշատակումն արդեն բավական է դարզ դատկերացնելու համար նրանց հիմնած այս միության գործունեության նդատակներն ու ուղղությունները: Այս մասին է խոսում նաեւ Համազգայինի հանրահայտ նշանաբանը. «Մեկ ազգ, մեկ մշակույթ, մեկ հայրենիք»:

Ազգային օջերայի եւ բալետի ակադեմիական բատրոնում երեկ կայացած հանդիսավոր երեկոյին հրավիրվել էին հայրենի բազմաթիվ գիտնականներ, արվեստագետներ, ազատամարտիկներ, ազգային մյուս կուսակցությունների ներկայացուցիչներ: Ավելի շատ ողջույնի խոսք հնչեցնող իր ելույթում Համազգայինի Հայաստանի վարչության նախագահ, բանաստեղծ Ռազմիկ Դավոյանը հակիրճ ուրվագծեց կրթամշակութային այս միության անցած ճանապարհը, մեր ազգային իդեալի դահդանման ուղղությամբ նրա գործադրած ջանքերի համառոտ դատմությունը: Կրելով Հայ հեղափոխական դաշնակցության գաղափարախոսությունը՝ միությունը ձգտել է ֆիզիկական հայրենիքը կորցրած մարդկանց մեջ վառ դահել «Հոգեւոր Հայաստանի» գաղափարը: Ելույթ ունեցողը միաժամանակ կարեւորեց սփյուռքում գործող մշակութային մյուս կազմակերդությունների՝ Թեմեյան մշակութային միության եւ «Նոր սերունդ»-ի դերը հայ մշակույթի զարգացման եւ հոգեւոր հարուստ ժառանգությունը եկող սերունդներին փոխանցելու գործում: Տարբեր գաղափարական դիրքերի վրա դրանք բոլորն էլ ի վերջո ծառայում են նույն նդատակին՝ հայկականության ոգին միշտ վառ դահելուն:

Ելույթին հաջորդեց ճոխ հայտագրով համերգը՝ մեր արվեստի ճանաչված վարդեսների մասնակցությամբ:

ԼԵՎՈՆ ԼԱՇԻԿՅԱՆ

11-94

digitised by A.R.A.R.@

Աշխարհ

# ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ. ԼԱՎ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՎԱՏ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ

Անգլիական հայցի The Economist հանդեսը, որ ապրիլի 16-ի համարում ընդարձակ հոդված է նվիրել Արևելյան Եվրոպայի երկրներին ցուցաբերվող եվրոպական համայնքի օժանդակությանը, որտեղ ինքնադատական խոսք կա ուղղված եւ այն հանձնախմբի հասցեին, որը ղեկավարում է այդ գործընթացը, եւ օժանդակությունը ստացող երկրներից հատկապես Ռուսաստանի հասցեին, որտեղ դեռեւս զգացվում է նախկին վարչակարգից մնացած անվստահության ու կասկածանքի շունչը: Հոդվածից տեղեկանում ենք, որ Կրեմլի միջանցքներն այս օրերին բառացիորեն ողողված են արեւմտյան խորհրդատուներով: Նրանց մի խումբը տնտեսական ստրատեգիայի վերաբերյալ խորհուրդներ է տալիս վարչապետ Վիկտոր Չեռնոմիրդինին: Մյուսն աջակցում է Ռուսաստանի պետական սեփականության վաճառքի գրասենյակի ծրագրերի մշակմանը, երրորդը նախարարությունների թիվը կրճատելու միջոցով փորձում է կառավարությունն ավելի կենտրոնական դարձնել: Չորրորդն օգնում է ԱՊՀ նորաստեղծ երկրների միջեւ ձեռք բերված առեւտրական համաձայնագրերի իրագործմանը:

Այս բոլորի ֆինանսավորողը եվրոպական համայնքն է, ավելի ճիշտ, նրա որդեգրած «Տեսիզ» ծրագիրը, որը մի այլ «Ֆեր» կոչված ծրագրի հետ միասին օգնություն է ցուցաբերում համապատասխանաբար նախկին Խորհրդային Միության հանրապետություններին եւ Արեւելյան Եվրոպայի երկրներին: Միասին վերցրած նրանք իրագործում են նախատեսված արեւմտյան ընդհանուր տեխնիկական օժանդակության մոտ 70 տոկոսը, առավելապես գիտելիքներ եւ փորձ փոխանցելով տեղացի մասնագետներին եւ ոչ թե վարկեր կամ կանխիկ գումար տրամադրելով նրանց:

«Ֆեր» ծրագիրը մշակվել է 1989-ին, երբ Լեհաստանն ու Հունգարիան բռնափեցին կոմունիզմը: Հետո երկրների թիվն ավելացել է, ներառելով նաեւ երեք Մերձբալթյան երկրները: Այս տարի նրանց կհատկացվի 1.040 միլիոն էկյու (1.255 միլիոն դոլար): Իսկ «Տեսիզ» ծրագիրը ներդնում է 510 միլիոն էկյու Խորհրդային Միության ժառանգորդ հանրապետություններին: Փողի մի մասը հատկացվում է լուրջ ստրատեգիական ծրագրերի մշակմանը տվող խորհուրդներին, իսկ մյուս մասն՝ այն խորհրդարանականներին (մոտ 750 հոգի), որոնք ընդգրկված են ավելի «աշխարհիկ» գործերի մեջ, որոնցից կարելի է նշել ձեռնարկություններում ուսումնասիրություններ կատարելը կամ բանկային համակարգի աշխատողների վերապատրաստումը: Օժանդակության բնագավառները բազմազան են, սկսած սեփականաշնորհումից, բնապահպանությունից, մինչեւ սննդամթերքի բաշխումը, հասարակական ծառայությունների բարեփոխումը եւ այլն: Օգնությունը տարբերվում է, օրինակ, Մոսկվան եւ Սանկտ Պետերբուրգը սննդամթերք են ստացել, Այբանիան օգտագործված բելգիական ավտոբուսներ, Ռումինիան արյան փոխնակարկման սարքավորումներ, իսկ Հունգարիան օդի աղտոտվածությունը չափելու հարմարանքներ:

Այս բոլորն իհարկե լավ է, սակայն եւ արեւմտյան խորհրդատուներն, եւ օգնություն ստացող երկրները ինքնադատական խոսք ունեն ուղղված եվրոպական հանձնաժողովին, որը ղեկավարում է այս ամբողջ գործը: Քննադատվում է առաջին հերթին նրա դանդաղկոտությունը: Նշվում է, որ ներդրումների այժմյան համակարգը չափազանց խրթին է եւ երկար: Այն հաճախ ձգձգվում է եւ երբեմն խորհրդարաններն ստիպված են լինում նախատեսված աշխատանքն սկսել 12-18 ամիս ուշացումով: Այդ պատճառով էլ 1991 թվի պայմանագրերի 70 տոկոսն է միայն իրագործվել: Խոչընդոտների շարքում առաջին հերթին նշվում է Խորհրդային Միության փլուզումը, որը նրանց ստիպել է վերանայել շատ համաձայնագրեր, այս անգամ արդեն նորաստեղծ հանրապետությունների ղեկավարների հետ: Դեպքեր են եղել, երբ խորհրդատուների հետ պայմանագրեր են կնքվել աշխատանքն սկսելուց մի տարի անց: Բուլղարիայում, օրինակ, անցյալ տարի հեռախոսային կապի համակարգում ընդգրկված խորհրդատուներն այդպես էլ չեն վարձատրվել, որովհետեւ մինչ պայմանագրի ստորագրվելը ծրագիրը «ջուրն է ընկել»:

Հանձնախումբն իր հերթին մեղադրում է եվրոպական համայնքի անդամ երկրներին, որոնք չեն աջակցում նրա բյուջեի մեծացմանը: Սակայն, ըստ հոդվածագրի, դա հետեւանք է նրա ոչ ճկուն քաղաքականության: Անդամ երկրներն էլ ունեն մեղքի իրենց բաժինը, հատկապես այն դեպքում, երբ փորձում են որպես խորհրդատու «անցկացնել իրենց թեկնածուներին, որպեսզի իրենք ստանան պարտքերի դիմաց մուծվող գումարները»: Այսպիսով, եզրակացնում է հոդվածագիրը, եթե եվրոպական հանձնախումբը բորբոքի իր արատները, արդյունքն ավելի ակնառու կլինի: Այն պետք է առավել «ինքնավարություն պարգեւի տեղացիներին եւ հետեւի որոշումների ոչ թե ընդունմանը, այլ կատարմանը: Այն պետք է ավելի շատ լսի տեղացիների տեսակետները եւ ավելի ճկուն համակարգ մշակի պայմանագրերը կնքելու համար: Եթե այս եւ նման առաջարկությունները հաշվի չառնվեն հանձնախմբի կողմից, նրա հեղինակությունն անկում կապրի բերկրանք պատճառելով Արեւելյան եւ Արեւմտյան Եվրոպայի ազգայնամոլներին»:

Հոդվածը հագեցած է նաեւ աղյուսակներով, որոնցից երկուսը ներկայացնում ենք:

| | | |
|---|---|---|
| Այբանիա | 10.0 | մլն. էկյու |
| Բուլղարիա | | 87.5 |
| Չեխոսլովակիա | | 100.0 |
| Էստոնիա | | 100.0 |
| Հունգարիա | | 98.5 |
| Լատվիա | | 15.0 |
| Լիտվա | | 20.0 |
| Լեհաստան | | 200.0 |
| Ռումինիա | | 152.0 |
| Սլովենիա | | 9.0 |
| Նախկին Հարավսլավիա | | 49.5 |
| Շրջանային | | 116.0 |
| Այլ ծրագրեր | | 48.0 |
| Ընդամենը | | 1.015.5 |

Այս գումարից ամենամեծ հատկացումները եղել են շատ մարդասիրական օգնության (156.5 մլն էկյու), երկրի ընդհանուր տեխնիկական հագեցվածությունն ավելացնելու (153.1 մլն էկյու) եւ կրթության, վերապատրաստման ու ուսումնասիրությունների գծով (140.5 մլն էկյու):

«Տեսիզ» ծրագրով 1992 թ. օգնություն են ստացել.

| | | |
|---|---|---|
| Հայաստան | 9.5 | մլն. էկյու |
| Ադրբեջան | | 12.5 |
| Բելառուս | | 14.6 |
| Վրաստան | | 9.0 |
| Ղազախստան | | 20.6 |
| Ղրղզստան | | 9.2 |
| Մոլդովա | | 9.0 |
| Ռուսաստան | | 111.0 |
| Թուրքմենստան | | 8.8 |
| Ուկրաինա | | 48.2 |
| Ուզբեկստան | | 18.7 |
| Այլ, ոչ ազգային ծրագրեր | | 179.0 |
| Ընդհանուր | | 450.1 |

Այստեղ էլ ամենամեծ հատկացումները եղել են էներգետիկայի (119.8 մլն էկյու), սեփականաշնորհման, ֆինանսների (80.5 մլն էկյու) եւ գյուղատնտեսության ու սննդամթերքի բնագավառներում (59.7 մլն էկյու):

Հ. Ծ.

Լուրերի Հոսք

## Բոսնիայում լարվածությունը չի թուլանում

Աբեմի գագաթաժողովի արդյունքներն առայժմ ոչ մի ազդեցություն չեն գործել Բոսնիայում տիրող իրավիճակի վրա, հաղորդում է RFI կայանը: Կայանը հաղորդում է, որ Ֆրանսիայի արտգործնախարարությունը ողջունել է Աբեմի համաձայնությունները եւ հույս հայտնել, որ դրանք կկոչվեն ամենամոտ ապագայում: Միաժամանակ Միացյալ Նահանգները շարունակում է թերահավատորեն վերաբերվել Աբեմում ձեռք բերված համաձայնություններին: ԱՄՆ պաշտոնական ներկայացուցիչը հայտարարել է, որ Միացյալ Նահանգները ծեռնամուխ կլինեն հատուկ զինվորական կազմավորման ստեղծմանը, եթե Բոսնիայի սերբական խորհրդարանը չվավերացնի Վենս-Օուեն ծրագիրը: BBC կայանը հաղորդում է, որ պետքարտուղար Ուորրեն Քրիստոֆերը որոշակի համաձայնության է հանգել Մեծ Բրիտանիայի վարչապետ Ջոն Մեյջորի հետ նախկին Հարավսլավիայում ռազմական ուժի կիրառման վերաբերյալ: Բոսնիայի սերբերի առաջնորդ Ռադովան Կարաջիչը հայտարարել է, թե ամերիկացիների սպառնալիքները կարող են հակառակ արդյունքների հանգեցնել:

## Քուվեյթը «Մաժինոյի գիծ» է ստեղծում

Քուվեյթի պաշտպանության նախարարությունը հայտարարեց, թե իրավական հարձակումից 3 տարի հետո կառավարությունը համապատասխան գումարներ է տրամադրել ռազմական պաշտպանական ամրությունների մի ամբողջ գիծ ստեղծելու Քուվեյթ-Իրաք 324 կմ սահմանագծի ամբողջ երկարությամբ:

## Մեղադրվում է լրտեսության մեջ

Մ. Նահանգների պետքարտուղարության պաշտոնատարները երեկ լրագրողներին հայտնեցին, թե դաշնակցային ոստիկանությունն ապրիլի 30-ին Վաշինգտոնում ձերբակալել է արտաքին ծառայության աշխատակից Սթիվըն Լալասին, լրտեսության մեղադրանքով: Լալասը, որ պետքարտուղարություն աշխատանքի է ընդունվել 1983 թ., ծառայում է Աբեմում ամերիկյան դեսպանատանը: Նախապես նա ծառայել է Բելգիայում, Սամբուլում եւ Թայվանում: Նախորդ օրը, ապրիլի 3-ին ամերիկյան պետքարտուղարության բանբեր Ռիչարդ Բուչերը լրագրողներին հայտնել էր լրտեսության մի ուրիշ պարագա, այս անգամ Ֆրանսիացիների հետ կապված: Նա հայտարարել էր, թե Մ. Նահանգների կառավարությունը Ֆրանսիական կողմի հետ վերջերս ինքարկել է «արդյունաբերական» լրտեսության պարագան: Ըստ նրա, Ֆրանսիայի լրտեսները մեծ աշխուժություն են ցուցաբերում ամերիկյան ֆիրմաների արտադրական ու տեխնիկական գաղտնիքները «որսալու» գործում:

## Գազային զենքից կօգտվեն դասընթացներից հետո

Ռուսաստանում արդեն գործում է ավելի քան 25 դասընթաց, որտեղ բնակիչները կարող են սովորել գազային զենքի եւ ինքնապաշտպանության մյուս միջոցների հետ վարվելու եղանակը: Այս մասին ՌԻԱ-ի թղթակցին հայտնեց միլիցիայի պաշտոնաթող զեներալ-մայոր, իրավապահ մարմինների աշխատողների սոցիալական ապահովագրության ֆոնդի փոխնախագահ Ալեքսանդր Վոլոխան: Նրա խոսքերով, անցյալ տարի արձանագրված հանցագործությունների թիվը գրեթե եռապատկվել է: Ընդամենը կես տարուկա ածել է սպանությունների, կոռուպցիոն հի, ելուզակային հարձակումների եւ մյուս հատկապես վտանգավոր հանցագործությունների թիվը: Ակնհայտ է, որ ինքնապաշտպանության հատուկ միջոցներից օգտվելու կարողությունը կարեւոր է դառնում բնակչության համար:

Սեսդի

Միջին Արեւելք

## Տաջիկստանը երկրորդ Աֆղանստան

«Տաջիկստանը երկրորդ Աֆղանստանն է», այսպես է բնութագրում իրավիճակը Տաջիկստանում եւ ռուսական զորքերի դերն այդ երկրում «Ազատություն» ռադիոկայանը: Ավելի վաղ կայանը հաղորդել էր, թե տաջիկա-աֆղանական սահմանն է ուղարկվել ռուսական բանակի չորրորդ բրիգադը, ինչը սակայն ոչ մի կերպ չնոպաստից սահմանի ամրացմանը: Երեք-չորս հարյուրակներ կազմող տաջիկական ջոկատները պարբերաբար ներթափանցում են երկիր, շատ հաճախ ամրանալով լեռնային շրջաններում, բարդացնելով կառավարական ուժերի խնդիրն իրավիճակը հսկելի պահելու հարցում: Վերջին հաղորդագրությունն ուզբեկական բանակի ռազմաօդային ուժերի Միգ-25 ինքնաթիռի զգեստման վերաբերյալ ցույց են տալիս Ուզբեկստանի մասնակցության աստիճանը տաջիկական իրադարձություններում:

Անշուշտ, Ուզբեկստանի աջակցությունը Դուշանբեի իշխանությանն իրավականորեն վավերացված է ԱՊՀ շրջանակներում ձեռք բերված համաձայնություններում, սակայն հազիվ թե այդ փաստաթղթում վավերացված լինի Տաջիկստանի ուզբեկ բնակչության եւ Ուզբեկստանի զինված ուժերի կողմից իրականացվող ցեղասպանությունը տաջիկ բնակչության նկատմամբ:

Իսկ անկախ դիտորդների վկայություններ հավաստում են, որ վայրագություններ խաղաղ բնակչության նկատմամբ ոչ միայն չեն դադարել, այլեւ ծավալման միտում ունեն: Հետաքրքիր է, որ ուզբեկների գործողություններին արեւմտյան քարոզչական մեքենան կցում է նաեւ տաջիկական ադարներին: Սա հետանկարում, տաջիկների դասալքման գործողությունների դեղքում կարող է նոր երանգ հաղորդել այդ երկրում տեղի ունեցող իրադարձություններին, մասնավորապես իրադարձությունների մեջ այս կամ այն չափով ներգրավելով արաբական աշխարհը, առանձնապես այն արաբական երկրներին, որոնք վերջին տասնամյակում ավանդականորեն են մասնակցություն ցուցաբերել աֆղանական իրադարձություններին:

Իսկ այն, որ քաղաքացիական պատերազմը Տաջիկստանում անմիջականորեն կապված է Աֆղանստանի հետ, վաղուց կասկած չի հարուցում: Այսպես, «Ազատություն» կայանի թղթակիցը, հենվելով հավաստի աղբյուրների վրա, հաղորդում է, որ Տաջիկստանի սարածք են ներթափանցել ոչ միայն երկրից զաղթած տաջիկների զինված կազմավորումները, այլեւ աֆղանստանցի տաջիկները: Եւ սա, նույն աղբյուրների տվյալներով, իրականացնում է ոչ միայն տաջիկների կամավոր կամքով, այլեւ պարտադրանքով: Մասնավորապես, Աֆղանստանի հյուսիսում անսահմանափակ տնօրինություն անող գեներալ Դոստումի զորամիավորումները բիրտ ուժի ճնշման միջոցով տաջիկական ջոկատներին ստիպում են վերկվել ԱՊՀ սահմանից այն կողմ: Տաջիկստանի տարածքում: Դրանով իսկ տաջիկական ջոկատների ներթափանցումը երկիր դառնում է ոչ միայն նրանց կամավոր ընտրության հետեւանքը, այլեւ կողմնակի ուժերի ազդեցության արդյունքը:

Ամենն դեպքում, այս պատերազմի ոչ ծանրությունը թե ռազմական եւ թե նյութական, ընկած է Ռուսաստանի ուսերին, որի քաղաքացիների հեռահար նպատակների համար արյունածոր կենդանի պարարտի դեր են կատարում ռուս զինվորականները:

Տ.Հ.

digitised by A.R.A.R.@

Լուրերի Հոսք

## Հանուն եւ ընդդեմ միջուկային փորձարկումների

«Վաշինգտոն Պոստ» թերթի հաղորդման համաձայն, հունիսի 1-ին մորատորիումի ժամկետի ավարտից հետո միջուկային զենքի փորձարկումները շարունակելու կամ չշարունակելու հարցի լուծման ԱՄՆ-ում այժմ քննարկվող տարբերակներից մեկը «նախատեսում է ոչ թե լիակատար հրաժարում ստորգետնյա պայթեցումներից, այլ լոկ դրանց հզորության սահմանափակում մեկ կիլոտոննայով»: Այս տարբերակի օգտին հանդես են գալիս պաշտպանության եւ էներգետիկայի նախարարությունների, շտաբների պետերի կոմիտեների բարձրաստիճան ներկայացուցիչները, ինչպես նաեւ միջուկային զենքով զբաղվող 3 լաբորատորիաների ղեկավարները: Դրա կողմնակիցները գտնում են, որ հարկավոր է շարունակել փորձարկումները, որպեսզի կարողանան վստահ լինել պատերազմի ժամանակ այդ զենքի հուսալիությանը, ինչպես նաեւ դրա անվտանգության եւ հուսալիության մեծացման նպատակով: Փորձարկումների հակառակորդները, այդ թվում պետդեպարտամենտի որոշ ներկայացուցիչներ հայտարարում են, որ ԱՄՆ-ում փորձարկումների վերսկսումը Ֆրանսիային եւ Ռուսաստանին կստիպի նույնպես հրաժարվել մորատորիումից: Փորձարկումների հակառակորդների ուժեղ փաստարկն այն է, որ դրանց վերսկսումը կթուլացնի ԱՄՆ-ի գլխավորությամբ գործադրվող միջազգային ջանքերը, որոնց նպատակն է կասեցնել միջուկային զենքի արտադրությունը Հնդկաստանում, Պակիստանում եւ Իրանում: ԱՄՆ Կոնգրեսի երեք սենատորներ, որոնց նախաձեռնությամբ կիրառվել էր մորատորիումը (դեմոկրատներ Միչել եւ Էքսոն, հանրապետական Հեթֆիլդ) ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության գծով օգնական Էնթոնի Նասակ են հղել, հայտարարելով, որ փորձարկումների վերսկսումը կհակասի օրենքի այն դրույթին, թե ԱՄՆ-ը ձգտելու է միջուկային փորձարկումների համընդհանուր արգելման:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ

## Դաշնակցային Ռուսաստանում սեփականաշրման ընթացքի մասին

Պետվիճակոմի տվյալների համաձայն, 1992 թ. Դաշնակցային Ռուսաստանում սեփականաշրվել է ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի ավելի քան 46 հազար ձեռնարկություն: Ունեցվածքի պետական կոմիտեի տվյալների համաձայն, այս տարվա հունվար-փետրվարին սեփականաշրվել է եւս 11 հազար ձեռնարկություն: Վիճակագիրների հետազոտությունները ցույց են տալիս, որ սեփականաշրված ձեռնարկությունների մեջ գերիշխում են մանրածախ առեւտրի (36 տոկոս), կենցաղային սպասարկման (22 տոկոս), թեթեւ արդյունաբերության (9 տոկոս) փոքր ձեռնարկությունները: Դրա հետ մեկտեղ աճում է դաշնակցային սեփականություն եղած խոշոր ձեռնարկությունների բաժինը: Ընթացիկ տարվա առաջին երկու ամսում այն 7-ից հասել է 12 տոկոսի, իսկ որպես կանոն մունիցիպալ սեփականություն եղած փոքր ձեռնարկությունների բաժինը 76-ից իջել է 71 տոկոսի: Հունվար-փետրվարին սեփականաշրված ձեռնարկությունների ընդհանուր արժեքը զգալիորեն տարբերվում է պետական սեփականության ձեւերից կախված: Մունիցիպալ սեփականություն եղած եւ սեփականաշրված մեկ ձեռնարկության արժեքը միջին հաշվով կազմում է 7 միլիոն ռուբլի, տարածքային սեփականություն եղածը՝ 12 միլիոն, դաշնակցային սեփականություն եղածը՝ 53 միլիոն ռուբլի: Սեփականաշրման պահին այդ ձեռնարկություններում զբաղված էր մոտ 2 միլիոն աշխատող: Ինչպես նշվում է պետվիճակոմի հաղորդագրության մեջ, բաժնետիրման միջոցով սեփականաշրված խոշոր ձեռնարկությունների բաժինն այս տարվա հունվարի 17 տոկոսից փետրվարին հասել է 24 տոկոսի: Սեփականաշրումից հունվար-փետրվարին ստացված ընդհանուր հասույթը (նեղառյալ 1992 թ. սեփականաշրված ձեռնարկություններից ստացված միջոցները) կազմել է մոտ 49 միլիարդ ռուբլի:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ

Մշակույթ

# Վերոնեզե. մեկ նկարի պատմություն

**Վերոնեզեն (1528-1588) այդ գործն ստեղծել էր մեկ տարում. Լուվրի մասնագետները ամբողջ փայլով այն վերականգնեցին երեք տարում:**



1992 թ վերջերին, նոամյա հրանգյան աշխատանքից հետո Լուվրի մասնագետները կարողացան վերականգնել Վերոնեզեի «Հարսանիք Կանայում» հանրահայտ կտավի ոչ միայն խամրած գույները, այլեւ անցյալ տարվա հունիսին բանգարանային աշխատանքների ժամանակ անզգուշորեն կտավին հասցրած պատռվածքները: Ներկայումս Լուվրում կրկին ներկայացված է ոչ միայն այդ կտավը, այլեւ դրա վերականգնման պատմությունը: Վերականգնման աշխատանքները մեծ խնամքով իրականացվել են փորձագետների հանձնաժողովի ուշադիր հսկողության ներքո, ներկաներին մոտ 100 զննություն է կատարվել նկարչի «խոհանոցի» գաղտնիքների լավագույն ընկալման նպատակով:

«Հարսանիք Կանայում» կտավը արվեստի պատմության այնպիսի կարեւոր ուղենիշ չէ, ինչպես Տիցիանի կամ Պիերո դելլա Ֆրանչեսկայի այս կամ այն գլուխգործոցը: Բայց դա մեկ տարվա ընթացքում (1562-1563) նկարչի իրականացրած գրեթե ալեհեկ սխրանքի արդյունքն է: 10 մետր երկարություն եւ 7 մետր բարձրություն ունեցող այդ հսկա կտավի վրա 130 մարդ է պատկերված: Ժամանակին այն զարդարում էր Վենետիկի Սան Ջորջիո Մաջորե վանքի ճաշասրահը, իսկ 1797 թ. Նաղոլեոնի զորքերը այն Ֆրանսիա տարան որպես ռազմավար:

Արվեստի անանց արժեք լինելուց բացի, գործն արժեքավոր է կերպարների հմուտ համադրությամբ եւ գույների բազմազանությամբ (վարդագույն, կանաչ, մոխրագույն, կարմիր, ոսկեգույն, արծաթագույն եւ այլն), որոնք լույսերի խաղ են ստեղծում: Բայց այդը երբեք չի կարողանում միանգամից ընկալել այդ կենսահոսդ խոշոր կտավը: Մասնակի դիտման դեղորում նկարը բերկրանք է պատճառում իր գրեթե խրախճանական, բայց միաժամանակ ասպետաբանական բնույթով: Տրենտի եկեղեցական ժողովը նույնպես ավարտվել էր 1563 թ., ինչպես որ կտավը, որի վրա, վենետիկցիների խնջույքից բացի, պատկերված է Քրիստոսի գործած առաջին հրաշքն ըստ Հովհաննու ավետարանի: Վերջերս Ֆրանսիայի ազգային թանգարանների միության հրատարակած «Վերոնեզեի «Հարսանիք Կանայում» կտավը» աշխատությունը տալիս է նկարի մանրակրկիտ վերլուծություն, անելով բացահայտումներ եւ հերքելով ընդունված որոշ տեսակետներ: Այսպես, գրում նշված է, որ հանրահայտ «Վերոնեզեի կանաչը» ստեղծվել է 19-րդ դարում եւ որ առաջին պլանում պատկերված երաժիշտները իրականում Բասանոն, Տիցիանը, Տինտորետտոն եւ հենց Վերոնեզեն չեն, ինչպես որ մինչեւ հիմա կարծում էին ամենալուրջ արվեստաբաններ, այդ թվում Գոմբրիխը:

Կտավի վրա կարելի է շատ բան գտնել: Ըստ կրոնական մեկնաբանության, պատկերված են ամուսնության հրաշքը, ջրի վերափոխվելը գինու, ինչը որոշ իմաստով կանխագուշակում է Գողգոթայի տառապանքները: Քրիստոսն ինքը կտավի կենտրոնում է, ծառաները նրա հետեւում բաժանում են մորթված գառը, ինչպես որ պատարագի ծեսից հետո հանում է կիսում եւ բաժանում նշխարը Քրիստոսի եւ աստծո գառան խորհրդավոր մարմինը:

Ըստ աշխարհիկ մեկնաբանության, հյուրերից մեկը բաժակ է բարձրացնում, առաջարկելով երկրային երջանկության կենացը: Ոսկյա սղամ, շքեղ հանդերձներ, բատերական հարդարանք, կողային մուտքեր պատկերող նկարն ասես հարուստ վենետիկցիների պերճանքի ցուցադրություն լինի: Գավաթների եւ ափսեների մեջ նկատելի են բազմաղիսի խաղցրավենիքներ, որոնցով հագեցված էր այն ժամանակվա Վենետիկը: Այդուհանդերձ, Վերոնեզեն ասես հիշեցնում է, որ Վենետիկին էր պատկանում շարքի մենաշնորհը Կանդիի շարաղարձարանի շնորհիվ, որը Կրետե կղզում ստեղծել էին արաբները դեռ 1000 թվականին: Սուլթանի փաթթոցավոր պատվիրակը շատ լավ վերաբերմունքի է արժանացել կտավի վրա: Վերոնեզեին հայտնի է եղել իր խաղաքի եւ Բ. դասի հարաբերությունների կարեւորությունը: Նկարի վրա պատկերված են սեւամորթ մատռվակներ: Վենետիկում այդ տարիներին ընդունված էր սեւամորթ ծառաներ ունենալ, որոնց հաճախ հագցնում էին զոլավոր հագուստներ: Կտավի մանրամասնությունները, խեղկատակների ներկայությունը, ուսաշներից ու բազեներից մինչեւ սպասավորների եւ հանդերձների մանրակրկիտ պատկերումը, միասնաբար տալիս են Վենետիկի 15-րդ դարի հասարակության ընդհանուր պատկերը:

Պատրաստեց
ՊԵՏՐՈՍ ՔԵՇԻՇՅԱՆԸ

ԱԶԳ - ՄԱՐԶԱԿԱՆ

# ՍԵԼԵՇԸ ԱՀԱԲԵԿՎԱԾ, ԳՐԱՖԸ ՅԱՎԱԿՑՈՂ

Վերջին ժամանակներում աշխարհի առաջին թենիսիստուհի, 19-ամյա հարավսլավուհի Մոնիկա Սելեշը հաճախ էր սանում անսորագիր նամակներ եւ անանուն հեռախոսազանգեր, որոնցում սպառնում էին հաշվեհարդար տեսնել նրա նկատմամբ: Շատերի կարծիքով, դա Բոսնիայի մահմեդականների գործն էր, քանի որ Մոնիկա Սելեշը Սերբիայի քաղաքացի է (այժմ նա ապրում է ԱՄՆ-ում) եւ այդ պատճառով թիրախ է դարձել հակառաջ կողմի համար:

Օրերս Համբուրգում ընթացող թենիսի միջազգային մրցաշարում պատահեց քաղաքի միջադեպ: Մագդալենա Մալեեւա-Բերբերյանի հետ մրցախաղի ընթացքում, երբ արդեն ավարտվել էր հերթական գեյմը, եւ մրցակիցները փոխվում էին դաշտի կողմերով, կատարվեց անսպասելին: Հանդիսատեսներից մեկը ներխուժեց խաղահրապարակ եւ թիկունքից դանակահարեց Սելեշին: Դեռեւ այնքան արագ կատարվեց, որ օրինապահ մարմինները չկարողացան որեւէ կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել, իսկ հանցագործը վնասազերծվեց հանդիսատեսների ուժերով, որը գերմանացի 38-ամյա Գյունտեր Քարկեն է: Բարեբախտաբար վերքն այնքան էլ խորը չէր: Խոհանոցի դանակը, որն օգտագործել էր հանցագործը, 16 սմ մխրճվել էր մարզուհու թիկունքում, վնասելով մեջքի մկանը: Բժիշկների հավաստիացմամբ, վտանգավոր ոչինչ չկա, եւ Սելեշի կյանքին ոչինչ չի սպառնում: Հետաքննությունը պարզեց, որ մահափորձ կատարողը հոգեկան խանգարումներ ունի եւ իր արարքը բացատրում է նրանով, որ ինքը գերմանացի թենիսիստուհի Շտեֆի Գրաֆի մոլի երկրպագուն է: Վերջին շրջանում Մոնիկա Սելեշի եւ Շտեֆի Գրաֆի միջեւ անհաշտ, բայց ազնիվ մրցակցություն է ծավալվել համաշխարհային թենիսի առաջատարության համար: Եւ այժմ վնասելով Սելեշին, ինքը հնարավորություն կտա իր կուռքին անցնել Սելեշից: Կարելի է ասել, որ դա նրան հաջողվեց: Ըստ բժիշկների, Մոնիկան խաղահրապարակ կարող է դուրս գալ միայն 3 ամսից:

Առաջինը, որ արձագանքեց եւ Սելեշին հիվանդանոց այցելեց, հենց Շտեֆի Գրաֆն էր: Նա հայտարարեց, որ շատ է հուզված եւ ցավում է անախորժ միջադեպի համար, եւ որ ինքը ցանկանում է Սելեշին շուտափույթ առողջություն: Գրաֆն այնքան էր հուզվել, որ մրցաշարի եզրափակիչում մրցելով իտալուհի Սանչես-Վիկարիոյի հետ, պարտություն կրեց:

Հիվանդանոց այցելած բազմաթիվ այցելուներից Սելեշը միայն Գրաֆին էր ցանկացել տեսակցել իր հիվանդասենյակում, իսկ երբ նրանք հանդիպեցին միմյանց, փաթաթվեցին եւ լաց եղան, չնայած մինչ այդ նրանց հարաբերությունները այնքան էլ ջերմ չէին:

Մոնիկա Սելեշը արդեն դուրս է գրվել հիվանդանոցից եւ մեկնել է Ս. Լաուդերդեյլ:

# Առաջատարը պարտվում է

Վերսկսվեցին ՀՀ առաջնության 4-րդ տուրի խաղերը:

«Հրազդան» մարզադաշտում ՀՄԲՄ-ը հանդիպեց Աբովյանի «Կոտայքի» հետ եւ երրորդ անընդմեջ հաղթանակը տարավ, այս անգամ 1:0 հաշվով: Գոլակը 54-րդ րոպեին խփեց Հայկ Մարգարյանը: Ցավոք, խաղավերջում տեղի ունեցավ տխուր միջադեպ, ծեծկռտուքի համար մրցավար Հակոբ Ներսիսյանը դաշտից հեռացրեց Սենյոն Բեգլարյանին («Կոտայք») եւ Սեյրան Պողոսյանին (ՀՄԲՄ):

Մրցաշարային աղյուսակը գլխավորող ՀՄՍ-ՖԻՍԱ-ն հյուրընկալվելով «Վանին» պարտություն կրեց 1:4 հաշվով: Գոլակները խփեցին. «Վան»՝ Գ. Կարապետյան (11 մետր., 7-րդ րոպե), Ս. Եվդոկիմով (45), Ս. Ղալթաղչյան (74), Ա. Դազարյան (81), ՀՄՍ-ՖԻՍԱ՝ Ռ. Սողոմոնյան (86):

«Շիրակ»-«Մալաթիա-Կիլիկիա» խաղն ավարտվեց 6:0 հօգուտ գյումրեցիների: Գոլակները խփեցին Գ. Մարգարյանը (20, 40), Ս. Կարապետյանը (30, 55), Գ. Գրիգորյան (80), Ա. Խաչմանյան (83):

Այսօր մայիսի 5-ին կիանդիպեն հետեւյալ թիմերը.

«Կանաչ»-«Բանանց»
«Արարատ»-«Զվարթնոց»
«Երազանք»-«Նաիրի»
«Քասախ»-«Ցեմենտ»:

# Շվեյցարիան հաղթում է Իտալիային եւ առաջ անցնում

Հին աշխարհամասում պայքարը 1994 թվականի ֆուտբոլի աշխարհի առաջնության համար շարունակվում է:

Այն թիմերը, որոնք արդեն կորցրել են եզրափակիչ փուլին մասնակցելու հնարավորությունը, չունենալով որոշակի մարզական խնդիրներ, իրենց ուշադրությունն արդեն բեւեռում են 1996 թ. Անգլիայում կայանալիք Եվրոպայի առաջնությանը, իսկ այն հավակնները, որոնք իրական հնարավորություններ ունեն մեկնել ԱՄՆ, անհաշտ պայքար են մղում:

Եվրոպական առաջին խմբում մրցաշարային աղյուսակը գլխավորող հավակնները հանդիպեցին միմյանց հետ: Շվեյցարիան սեփական հարկի տակ ընդունեց Իտալիայի հավակնորդին: Երկու թիմերը, որ մինչ այդ խմբային մրցաշարում պարտություն չէին կրել, իսկ առաջին շրջանի միմյանց միջեւ կայացած հանդիպումն ավարտել էին 2:2, հենց սկզբից առանց հեռախուզության անցան հարձակման: Դաշտի տերերի գոռներից մեկը պսակվեց հաջողությամբ: Պաշտպանելով հաշվի նվազագույն տարբերությունը, շվեյցարացիները հաղթանակ տարան եւ երկու միավորով առաջ անցան իրենց հիմնական մրցակցից Իտալիայի հավակնորդից:

| | Մ | Խ | Հ | Ո | Պ | Գ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Շվեյցարիա | 12 | 7 | 5 | 2 | 0 | 17-3 |
| 2. Իտալիա | 10 | 7 | 4 | 2 | 1 | 15-6 |
| 3. Պորտուգալիա | 6 | 5 | 2 | 2 | 1 | 8-4 |
| 4. Շոտլանդիա | 4 | 5 | 1 | 2 | 2 | 4-8 |
| 5. Էստոնիա | 1 | 2 | 0 | 1 | 1 | 0-8 |
| 6. Մալթա | 1 | 7 | 0 | 1 | 6 | 2-17 |

**Եվրոպական խմբերում մայիս ամսվա խաղերը**

**1-ին խումբ**
12.05. Էստոնիա-Մալթա
19.05. Էստոնիա-Շոտլանդիա
**2-րդ խումբ**
19.05. Սան Մարինո-Լեհաստան
29.05. Լեհաստան-Անգլիա
**3-րդ խումբ**
15.05. Լատվիա-Ալբանիա
25.05. Լիտվա-Հյուս. Իռլանդիա
26.05. Ալբանիա-Իռլանդիա
**4-րդ խումբ**
22.05. Բելգիա-Ֆարերյան կղզիներ
**5-րդ խումբ**
20.05. Լյուքսեմբուրգ-Իսլանդիա
20.05. Ռուսաստան-Հունաստան
**6-րդ խումբ**
12.05. Բուլղարիա-Իսրայել
13.05. Ֆինլանդիա-Ավստրիա
19.05. Շվեդիա-Ավստրիա

# Ռուսներն առաջինն են

Այս հաղթանակը, որը բոլորը միաբերան անվանեցին անսպասելի, բայց արժանի, առաջինն էր Ռուսաստանի համար նման կարգի մրցումներում: Ճիշտ է, 21 անգամ մինչ այդ աշխարհի չեմպիոնի տիտղոսին արժանացել էր նախկին ԽՍՀՄ հավակնորդը, որի անմիջական փոխարինողը Ռուսաստանի հավակնորդն էր: Կիսաեզրափակիչ խաղերում հանդիպեցին Չեխոսլովակիա-Շվեդիա եւ [illegible] ռուսական թիմերը: Առաջին [illegible] ժամ հիմնական ժամանակն [illegible] ոչ ոքի 3:3, եւ նշանակվեց [illegible] ցուցիչ ժամանակ, որի ընթացքում էլ վերջին երկու առաջնության հաղթող Շվեդիայի հավակնորդի հոկեյիստներին հաջողվեց խփել վճռորոշ գոլը: Այսպես հանդիպումը, որն ավարտվեց 7:4 հօգուտ Ռուսաստանի, անվանվեց անակնկալ: Քանի որ կանադացիները անցկացված խաղերում պարտություն չէին կրել, եւ այդ պատճառով շատերը նրանց համարում էին առաջնության հաղթողի հիմնական թեկնածու, բայց ռուսները, որոնք մինչ այդ փոփոխական հաջողությամբ էին հանդես եկել եւ իրենց խմբում զբաղեցրել էին միայն երրորդ տեղը, զարագանցեցին բոլոր սպասելիքները: Եզրափակիչում հանդիպեցին Ռուսաստանի եւ Շվեդիայի հավակնորդները: Արդեն խաղի երկրորդ րոպեին Տիտովն առաջ մղեց իր թիմին, իսկ հիշ-անց 8-րդ րոպեին Նիկոլիշինը կրկնապատկեց հաշիվը: Ռուսները ոգեւորված իրենց հաջողությունից, անընդհատ դակեսի 8-րդ րոպեին խոմուտովը հաշիվը դարձրեց 3:0: Շվեդները, զգալով, որ ոչինչ չունեն կորցնելու, ողջ թիմով լաց նետվեցին եւ սխրեցին, որպեսզի իր ողջ վարպետությունը ցուցադրի դարպասապահ Տրեֆիլովը, որը ճանաչվեց խաղի լավագույն հոկեյիստը: Միայն 50-րդ րոպեին Շվեդիայի հավակնորդը կարողացավ բրջել հաշիվը: Ի վերջո, գրանցվեց 3:1 հաշիվը: Այդ հաղթանակն էլ Բորիս Սիխայլովի սաներին բերեց աշխարհի առաջնության գլխավոր մրցանակը, որը հանձնեց Գերմանիայի կանցլեր Հելմուտ Քոլը: 3-րդ մրցանակին արժանացան Չեխոսլովակիայի միացյալ թիմի հոկեյիստները, որոնք 5:1 հաշվով հաղթեցին կանադացիներին:

ԱՇՈՏ ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Տարեթիվ

# ԿՆՇՎԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ՝ «ԱԶԴԱՐԱՐԻ» 200-ԱՄՅԱԿԸ

Շուրջ երկու դար է անցել այն օրից, երբ Հարությունն Շմավոնյանը մայր հայրենիքից դուրս հեռավոր Հնդկաստանում հիմնեց տպարան եւ լույս ընծայեց առաջին դարբերականը, հիմք դնելով հայ լրագրությանը (1794 թ.): «Հայաստան-Հնդկաստան» ընկերության վարչության հերթական նիստին, որին մասնակցում էին մասավորականության եւ մամուլի ներկայացուցիչներ, նշվեցավ «Ազդարարի» լույս ընծայած 200-ամյակը 1994 թ. հանդիսավորությամբ նշելու հարցը:

Միջոցառումների ծրագիրը ներկայացրին վարչության նախագահ Ռոբերտ Թոխմանյանը եւ փոխնախագահ Հովսեփ Սեֆերյանը: Առաջարկություններով հանդես եկան ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից-անդամ Վլադիմիր Խոջաբեկյանը, բանասիրական գիտությունների թեկնածու Մարգո Մխիթարյանը, հեռուստալրագրող Սերգեյ Երիցյանը եւ ուրիշներ:

Ընդունվեց «Ազդարարի» հոբելյանական հանդիսությունների կազմակերպման գործում շահագրգիռ անձանց ու կազմակերպություններին ուղղված հայտարարություն:

Հիշարժան տարեթիվը նշելու. Հայաստանում, Հնդկաստանում եւ սփյուռքում իրագործվելիք հանդիսություններին համազգային բնույթ տալու համար «Հայաստան-Հնդկաստան» ընկերության վարչությունը որոշել է ստեղծել առանձին հանձնախումբ, որի աշխատանքներին մասնակցելու են հրավիրում մասավորականության, մամուլի, կրթական ու մշակութային հիմնարկների ներկայացուցիչներ:

Հանդիսությունների կազմակերպման գործադիր կոմիտե ստեղծելու նպատակով հունիսի սկզբին գումարվելու է ընդլայնված ժողով: Բոլոր շահագրգիռ կազմակերպություններն ու անհատները, որոնք ցանկություն ունեն մասնակցել այդ ժողովին, կարող են դիմել մինչեւ ս. թ. մայիսի 25-ը, հետեւյալ հասցեով՝ Երեւան-1, Աբովյան փ. 3, արաստանյան երկրների հետ մշակութային կապի եւ համագործակցության հայկական ընկերություն, հեռ. 58-15-92:

ԱՐՄԵՆՊՐԵՍ

## Հայտարարություն

Հայաստանի Մասավորականների միությունը բարձրագույն կրթության ոլորտի աշխատողներին հրավիրում է հավաքի, որտեղ կքննարկվի Հայաստանի բարձրագույն կրթության համակարգի աշխատողների սոցիալական աղետալի դրությունը եւ այդ վիճակից դուրս գալու հարցերը: Հավաքը տեղի կունենա մայիսի 6-ին, ժ. 15-ին, Գյուղատնտեսական ինստիտուտի դահլիճում (կենտրոնական մասնաշենք):

Մասավորականների միության վարչություն

Վերնագիր

# ԱՄՆ-ՉԺՀ. Քլինթոնը դայմաններ է առաջադրում

Ամերիկա-չինական առեւտրատնտեսական հարաբերությունների բնականոն զարգացման համար Պեկին նից դահանջվում է «վարել դաստաբանական ներքին քաղաքականություն, հարգել մարդու իրավունքները եւ այսուհետեւ էլ ժողովրդավարացնել հասարակությունը»: Այդ մասին հայտարարեց ԱՄՆ նախագահ Քլինթոնը Հոնկոնգի բրիտանացի նահանգապետ Քրիսթոֆեր Փեթենի հետ կայացած բանակցությունների ժամանակ:

«Մի շարք բնագավառներում Չինաստանն անցած տարիներին հաստատուն քայլեր է ձեռնարկել, ասաց նախագահը: Բայց դահանջվում է անել էլ ավելին, եւ ես կարծում եմ, որ դա կարվի: Մենք հուսով ենք, որ կկարողանանք Չինաստանի հետ դահպանել առավելագույն լավ հարաբերություններ: Մենք շահագրգռված չենք նրա մեկուսացմամբ»:

Մինչեւ այս տարվա հունիսի 6-ը Բ.-Քլինթոնը դետք է որոշում ընդունի այն մասին, թե դետք է արդյոք վերականգնել նախագահ Ջ. Բուշի օրոք ՉԺՀ-ին տրամադրված առեւտրի առավել բարենդաստման ռեժիմը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ-ՏԱՍՍ

Տարեթիվ

# Մեղսակից է արդյոք Միտերանը Բերեգովուայի ինքնասպանությանը

Ֆրանսիայի նախկին վարչապետ Պիեր Բերեգովուայի ինքնասպանությունը շարունակում է հուզել Ֆրանսիայի եւ եվրոդական այլ երկրների հասարակական միտքը: Այդ դարբերական իրադարձության կապակցությամբ իրենց ցավակցությունն են հայտնել Գերմանիայի կանցլեր Հելմուտ Քոլը եւ Պորտուգալիայի նախագահ Մարիո Սոարեշը: Վերջինս Բերեգովուայի հին ընկերներից էր եւ անձնական ամենասերտ կապեր էր դահպանում Բերեգովուաների ընտանիքի հետ: Սոարեշը լրագրողներին ասել է, թե «Բերեգովուայի ինքնասպանությունը մեր ժամանակների ամենադրամատական եւ անբացատրելի իրադարձություններից է»:

Մինչ քաղաքական գործիչները հարձակում են գործում մամուլի եւ լրատվության այլ օրգանների վրա, մեղադրելով նրանց չափազանց հարձակողականության մեջ, «Գերմանական ալիք» ռադիոկայանի թղթակիցը Փարիզում հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում նախկին վարչապետի վերջին օրերի վերաբերյալ: Այսպես, նա դնդում է, որ ինքնասպանությունից մի քանի օր առաջ Պիեր Բերեգովուան մի քանի անգամ կապվել է նախագահ Ֆրանսուա Միտերանի հետ եւ տեսակցություն խնդրել նրանից: Սակայն նախագահ Միտերանը շարունակ մերժել է անձնական հանդիպումը, իսկ վերջին խոսակցության ժամանակ նրան խորհուրդ տվել մեկնել Փարիզից եւ ժամանակն անց կացնել որեւէ խաղաղ գավառական վայրում, ընտանիքի գրկում: Թղթակիցը գտնում է, որ Միտերանի վանողական վերաբերմունքը տասնամյակների իր մտերիմ ընկերոջ նկատմամբ վճռորոշ դեր է խաղացել Բերեգովուայի կյանքից հեռանալու վճռի մեջ: «Միտերանի տված խորհուրդը նշանակում է հեռացում քաղաքականությունից եւ մեկուսացում, որն անտանելի դետք է լիներ մի մարդու համար, որը ոչ կյանքը նվիրել էր քաղաքականությանը», նշում է թղթակիցը: Ինչեւէ, RFI կայանը հաղորդում է, որ նախագահ Միտերանը մասնակցելու է նախկին վարչապետի թաղման արարողությանը եւ հրաժեշտի խոսք է ասելու նրա գերեզմանի վրա: ■


## Փայլուն տեսողություն

«Օգնություն» կենտրոնը կազմակերպում է տեսողության լավացման կուրսեր՝ ամենաբնական մեթոդով: Դուք ձեզ կբերեք փայլուն տեսողություն, բուժվելով ըստ ամերիկյան ակնաբույժ Բեյքսի՝ «մեթոդի՝ առանց ակնոցների եւ դեղամիջոցների:

Հանգահարել 340961 եւ 616195
ժամը 17-22-ը:

## Ցուցահանդես

Եղիսե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանը մայիսի 9-ին, ժամը 12-ին հրավիրում է Շուշիի ազատագրման տարելիցին նվիրված հանդիսությանը: Այդ օրը թանգարանի սրահում կբացվի «Շուշի. մշակութային կյանքի մեկ դար. 1820-1920 թթ.» ցուցահանդեսը:

Հասցեն՝ Արամի փողոց, թիվ 1:

ՄԱՐԿՈՍՅԱՆ ԵՎ ՈՐԴԻ
MARKOSIAN & VORDI
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՆՔ
ՀՐԱՎԻՐՈՒՄ
ՇՐՋԻԿ ԼՐԱԳՐԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ
Աշխատավարձը գործատուին է, որը կկազմի ամսական 10–15 հազար ռուբլի
ԴԻՄԵՔ ՄԵՂ
Արշակունյաց 2, 1 հարկ
(«Պարբերական» հրատարակչություն)

ENTERPRISE
Mercury

"Mercury enterprise"-ը

հերթական անգամ անցկացնելով ինվեստիցիոն գործընթացը բնակչությանը հնարավորություն է ընձեռում իրենց խնայողությունները դահդանել հիպերինֆլացիոն դրոցեսներից: Ֆիրմայի մասնագետները այս անգամ առաջարկում են ներդրումների հետեւյալ տարբերակները.

1. Եռամսյա ավանդների դեպքում -15% ամսեկան, որը ժամկետի վերջում կկազմի -45%
2. Վեցամսյա ավանդների դեպքում -20% ամսեկան, որը ժամկետի վերջում կկազմի -120%

"Mercury enterprise"-ը

Երաշխավորում է ձեր գումարների ապահովվածությունը արժեզրկման դայմաններում ամենակայուն ապրանք հանդիսացող անշարժ գույքով:

Երեւան, Սայաթ-Նովայի 19, «ԱՆԻ» հյուրանոց, 6-րդ հարկ 632 եւ 634 սենյակներ ☎ 594-632 594-634

«ԿԱՊՐՈԼԻՏ» ֆիրման
«ԲԻՈԿՈՆՎԵՐՍԻԱ» եւ ասոցիացիան

Ջրվեժ ավանի դահեստից վաճառում են կենսահումուս:
Մեծածախ գնորդների համար սահմանված է 20 տոկոս զեղչ:
Վճարը ցանկացած ձեւով
Հեռախոսներ՝ 27-81-91, 58-04-26, 58-54-27, 56-83-31:


Լուրեր Հայրենիքից

## Մակվում է Վրաստանի սահմանադրությունը

Թբիլիսի, 4 մայիս. Սնարֆ: Պետական սահմանադրական հանձնաժողովի նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն, ելույթ ունենալով այդ հանձնաժողովի մայիսի 3-ի նիստում, բոլոր 16 աշխատանքային խմբերին հանձնարարեց ամենամոտ ժամանակներս ներկայացնել ինքդրես հանրադետության սահմանադրության նախագծի, այնդես էլ Վրաստանի հավանական դետական կառուցվածքի իրենց տարբերակները: Շեւարդնաձեն խորհուրդ տվեց հետեւել միջազգային իրավական նորմերին եւ ակտերին, սակայն հայտարարեց, որ նախագծերը մշակելիս անհրաժեշտ է ելնել այն իրականությունից, որն առկա է այսօր Վրաստանում: Խոսելով ադագա սահմանադրության կոնկրետ դրույթների մասին, նա նշեց, որ չնայած դետության կառուցվածքին, լինի այն խորհրդարանական կամ նախագահական, հատուկ նշանակություն ունի գործադիր եւ օրենսդիր իշխանությունների սահմանազատումը: «Այդ հանգամանքի բացակայությունը հաստատում են Ռուսաստանում տեղի ունեցող իրադարձությունները», ասաց Շեւարդնաձեն:

## Նախկին նախագահի կողմնակիցները լքում են դիրքերը

Թբիլիսի, 4 մայիս. Սնարֆ: Վրաստանի նախկին նախագահի կողմնակից Լուրի Կոբալիան իր ջոկատի հետ լքել է մարտական դիրքերն Օչամչիրի շրջանում, ուր նա ժամանել էր ադրիլի 22-ին: Ինչդես հաղորդում է վրացական «Միմոմխիվելի» թերթը, Կոբալիան դահանջում էր, որ իր ջոկատին շնորհվի խաղաղարար ուժերի կարգավիճակ եւ այն ենթարկվի նախկին նախագահ Զվիադ Գամսախուրդիային:

## Ասիայի երկրներում չքավորությունը նվազել է

Ասիայի երկրներում չքավորության մակարդակի իջեցման գործում ձեռք են բերվել մեծ հաջողություններ, բայց Հնդկաստանում այն առաջվա դես մնում է բարձր, իսկ Չինաստանում առաջընթացը դանդաղել է, հաղորդել է Ֆրանս դրես գործակալությունը, վկայակոչելով Համաշխարհային բանկի տվյալները: Բանկի զեկուցագրի հեղինակները, Արեւելյան Ասիան գտնվում է չքավորության հաղթահարման ճանապարհին, բայց Հարավային Ասիայում բնակչության 49 տոկոսը տակավին ունի չքավորության նշագծից ցածր կենսամակարդակ: Չինաստանում աղքատների թիվը 1978 թ. 270 միլիոնից (երկրի ամբողջ բնակչության մեկ երրորդը) 1985 թ. իջել էր 100 միլիոնի (երկրի բնակչության մեկ տասներորդից դակաս): Մալայզիայում երկրի ամբողջ բնակչության մեջ չքավորների թիվը 1970 թ. 49,3 տոկոսից 1989 թ. հասել էր 15,3 տոկոսի: Հարավային Ասիայում այդ բնագավառում առաջընթացը դակաս նշանակալի է եղել: Օրինակ, Բանգլադեշում 1986 թ. աղքատ է եղել գյուղական բնակչության 51 եւ քաղաքային բնակչության 56 տոկոսը: 1988-89 թթ. այդ հարաբերակցությունը կազմել 48 եւ 44 տոկոս: Նեդալում առաջվա դես չքավոր է համարվում բնակչության 40 տոկոսը:

ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ-ՏԱՍՍ


Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՍԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՀԱՄԼԵՏ ԳԱՍՊԱՐՅԱՆ / 581841
Տնօրէն
ԱՍՊԱՏ ԱՍՊԱՏՅԱՆ / 562883
Apple® Macintosh®
համակարգչային տարածք «Ազգ» թերթի
Azg armenian daily
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
Թերթի մշակումը եւ տարածումը ինքնուրույն պատասխանատու ՊԱՎԵԼ ԴԱԼԼԱՔՅԱՆ




digitised by A.R.A.R.@